2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽՈՐԴԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱԶԱՏ ԿԱՄԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎՐԱ

(ՓԱՍՏԱՀԱԱՔ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ)

Հունիսի 18, 2026թ.

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայացված զեկույցը նպատակ ունի իրավաքաղաքական գնահատական տալ 2026թ. հունիսի 7-ին կայացած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին նախորդած ժամանակահատվածում արձանագրված այն վերբալ և ոչ վերբալ բռնաճնշումների դեպքերին և դրանցով պայմանավորված երկրում տիրող ընդհանուր մթնոլորտին, որոնք իրենց բնույթով և ծավալով կարող էին ազդել քաղաքացիների ազատ կամարտահայտման իրավունքի իրականացման վրա: Զեկույցը չի անդրադառնում ընտրական գործընթացի բոլոր բաղադրիչներին կամ քվեարկության օրվա կազմակերպչական հարցերին, այլ կենտրոնանում է նախընտրական միջավայրի վրա՝ որպես ազատ և արդար ընտրությունների անբաժանելի տարրի:

2018թ. ժողովրդական լայն աջակցությամբ, «Ոչ բռնի, թավշյա» հեղափոխությամբ[1] իշխանության եկած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կառավարման ութ տարիների ընթացքում Հայաստանի ներքաղաքական միջավայրը բնութագրվել է հասարակական խոր բևեռացմամբ, հանրության երկփեղկվածությամբ՝ սևերի ու սպիտակների բաժանման փորձով, իշխանության քննադատների նկատմամբ աճող անհանդուրժողականությամբ, մեծաքանակ ձերբակալություններով, սփյուռքահայ գործիչների Հայաստան մուքտի արգելքով, պետական և իրավապահ, ինչպես նաեւ ազգային անվտանգության համակարգի քաղաքական չեզոքության վերաբերյալ պարբերաբար հնչող մտահոգություններով, լրատվամիջոցների դեմ դատական մեխանիզմների կիրառման ճնշումներով, լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնություններով, Հայ Առաքելական Եկեղեցու դեմ քաղաքական ճնշումներով և հոգևորականների նկատմամբ քրեական հետապնդումներով, ինչպես նաև քաղաքական, հանրային խոսքում թշնամական հռետորաբանության ներդրմամբ: Հատկապես 2026թ. խորհրդարանական ընտրություններին նախորդած ամիսներին արձանագրվել են քաղաքական մրցակիցների, հանրային ազդեցություն ունեցող անձանց ու ինստիտուտների, լրագրողների, հոգևորականների և շարքային քաղաքացիների նկատմամբ իրականացված այնպիսի գործողություններ, որոնք հանրային ընկալման մեջ դիտարկվել են որպես ահաբեկման, լռեցման, հեղինակազրկման կամ քաղաքական

[1] https://www.youtube.com/watch?v=dzdQo2LlNeY

մասնակցությունը սահմանափակելու փորձեր, հանրության շրջանում անհանդուրժողականության, տարբեր խմբերի հանդեպ թշնամանքի, ատելության գեներացում:

Սույն զեկույցում ներկայացված դեպքերը գնահատվել են ոչ թե մեկուսացված միջադեպերի, այլ դրանց ամբողջության և փոխկապակցվածության համատեքստում՝ փորձելով պատասխանել հետևյալ հիմնարար հարցին. ***արդյո՞ք նախընտրական շրջանում ձևավորված վախի, թշնամանքի և հնարավոր հաշվեհարդարի մթնոլորտը կարող էր էական ազդեցություն ունենալ ընտրողների ազատ կամքի ձևավորման և արտահայտման վրա***: Այլ կերպ ասած՝ ***արդյո՞ք իշխանության ներկայացուցիչների կողմից կիրառված հռետորաբանությունը, իրավական և վարչական գործիքների ընտրովի օգտագործման վերաբերյալ բարձրացված մտահոգությունները, ինչպես նաև այլախոհության տարբեր դրսևորումների նկատմամբ ոչ համաչափ արձագանքները կարող էին սահմանափակել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Ընտրական օրենսգրքով երաշխավորված ազատ ընտրության իրավունքի արդյունավետ իրականացումը***:

Զեկույցը չի հավակնում փոխարինել իրավասու մարմինների իրավական գնահատականներին կամ դատարաններին: Այ***նուամենայնիվ, ներկայացված փաստերի համադրված վերլուծությունը թույլ է տալիս գնահատել, թե արդյոք նախընտրական շրջանում արձանագրված իրադարձությունները բավարար էին ընտրողների վարքագծի վրա «սառեցնող ազդեցություն» (chilling effect) թողնելու, քաղաքական մասնակցությունը զսպելու և ընտրությունների արդյունքների նկատմամբ հանրային վստահությունը նվազեցնելու համար:*** Եթե ընտրողն իր քաղաքական նախապատ-վությունը ձևավորում և արտահայտում է ոչ թե ազատ կամքի, այլ վախի, պիտա-կավորման, հանրային նվաստացման կամ հնարավոր պատժի պայմաններում, ապա կասկածի տակ է դրվում ոչ միայն ընտրական գործընթացի մրցակցային բնույթը, այլև ընտրությունների միջոցով իշխանության ձևավորման ժողովրդավարական լեգիտիմությունը:

Զեկույցը բաղկացած է ինը փոխկապակցված բաժիններից, որոնցում ներկայացվում և վերլուծվում են 2026 թ. հունիսի 7-ի Ազգային ժողովի ընտրություններին նախորդած ժամանակահատվածում արձանագրված վերբալ և ոչ վերբալ բռնաճնշումների հիմնական դրսևորումները: Մասնավորապես, ուսումնասիրվում են նոր քաղաքական ուժի ձևավորումը կանխելուն ուղղված առաջին լայնածավալ ճնշումները, վարկաբեկման փորձերը՝ «Սրբազան պայքարի» և դրա աջակիցների նկատմամբ, ընդդիմադիր առանցքային քաղաքական դերակատարներ Սամվել Կարապետյանի, Գագիկ Ծառուկյանի, Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդման և սեփականության իրավունքի պաշտպանության շուրջ ծագած մտահոգությունները, նրանց կողմից ղեկավարվող քաղաքական ուժերի ներկայացուցիչների նկատմամբ իրականացված հետապնդումները, ազատ խոսքի և մամուլի սահմանափակումները, քաղաքացիների նկատմամբ ճնշումների դեպքերը, ատելության խոսքի և թշնամանքի մթնոլորտի ձևավորումը, մասնավորապես՝ արցախահայության նկատմամբ ատելության, հիբրիդային պատերազմի (որի նպատակն է ՀՀ գործընկեր, բարեկամ երկրներին թշնամի ներկայացնելը և իրենց սխալների մեջ մեղադրելը, և հակառակը թշնամու ագրեսիվ հռետորաբանությունը մեղմել փորձելը), դեմոնիզացիայի և «վիուկների որսի» դրսևորումները, ինչպես նաև ունեզրկման սպառնալիքները և Հայ Առաքելական Եկեղեցու

նկատմամբ քաղաքական համատեքստում իրականացված ճնշումները: Առանձին բաժնում քննարկվում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ կենտրոնական իշխանության կողմից գործադրվող ճնշումները այն դեպքերում, երբ վերջիններս ընդդիմադիր ուժ են ներկայացնում: Վերջին բաժիններում ներկայացված փաստերը գնահատվում են միջազգային ժողովրդավարական չափանիշների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Ընտրական օրենսգրքով ամրագրված ազատ ընտրության և ազատ կամարտահայտման սկզբունքների լույսի ներքո՝ նպատակ ունենալով պարզելու, թե արդյոք դրանց ամբողջությունը կարող էր էական ազդեցություն ունենալ քաղաքացիների քաղաքական վարքագծի, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության և 2026 թ. հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների արժանահավատության վրա:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

2026թ. խորհրդարանական ընտրությունները տեղի ունեցան տարածաշրջանային և միջազգային լարվածության պայմաններում, որի պայմաններում Հայաստանը հայտնվել է տարբեր աշխարհաքաղաքական կենտրոնների շահերի հատման կետում: 2020թ. պատերազմից և Լեռնային Ղարաբաղի կորուստից ու հայաթափումից հետո Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման, անվտանգության համակարգի և տարածաշրջանային հաղորդակցությունների շուրջ ձևավորվել են փոխադարձաբար մրցակցող օրակարգեր:

Մի կողմից, արևմտյան դերակատարները՝ մասնավորապես Եվրոպական Միությունը և Միացյալ Նահանգները, վերջին տարիներին ակտիվացրել են իրենց ներգրավվածությունը Հայաստանում՝ արտաքուստ աջակցելով «ժողովրդավարական բարեփոխումների պետական ինստիտուտների ամրապնդման և տարածաշրջանային կայունությանն ուղղված նախաձեռնությունների» գործընթացին, սակայն իրականում աչք փակելով իշխանությունների կողմից իրականացվող աղաղակող անօրինությունների վրա, որոնք ուղեկցվում են պետական ռեսուրսի չարաշահմամբ և վատնմամբ: Հայաստանի իշխանություններն իրենց հերթին հայտարարել են Եվրոպական Միության հետ մերձենալու և ԵԱՏՄ ու ՀԱՊԿ համակարգերից դուրս գալու հնարավորության մասին՝ իրենց գործած քաղաքական սխալների համար ցեխ շպրտելով նաև վերջին երկու կառույցների վրա: Ավելորդ չէ նշել, որ ներպետական լարվածության ֆոնին, ժամանելով Երևան 2026թ. մայիսի 4-ին՝ մասնակցելու Եվրոպական քաղաքական համայնքի (ԵՔՀ) 8-րդ գագաթնաժողովին[2] և դրան զուգահեռ անցկացվող Հայաստան-ԵՄ անդրանիկ գագաթնաժողովին, Եվրոպական առաջնորդներից ոմանք[3] իրենց անթաքույց օժանդակությունը հայտնեցին վարչապետ Նիկոլ Փաշինյանի թեկնածությանը, ինչը կարելի է դիտարկել որպես միջամտություն պետության ներքին գործերին: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը[4] ևս հրապարակային խոսել է Փաշինյանի թեկնածությանը աջակցելու մասին: Սրանք պետք է դիտարկել որպես Հայաստանի ինքնիշխանության կարևորագույն գործընթացին միջամտության փորձեր:

[2] https://hetq.am/hy/article/181193
[3] https://abcmedia.am/khaghakhakanutyun/164576/
[4] https://armeniatoday.am/hy/politics/foreign-policy/1079891/

Մյուս կողմից, Ռուսաստանը, որը երկար տարիներ հանդիսացել է Հայաստանի հիմնական ռազմավարական գործընկերը և անվտանգության համակարգի առանցքային դերակատարը, տարածաշրջանում ձգտում է պահպանել իր ազդեցությունը՝ Հարավային Կովկասը դիտարկելով որպես իր կենսական շահերի գոտի: ՌԴ ղեկավարը ուղղակիորեն չի փորձել որևէ թեկնածուի սատարել[5], սակայն ԵՄ ընդլայնման համատեքստում նա արձագանքել է, որ Հայաստանի ժողովուրդը տնտեսական թելերով կապված է ՌԴ-ի հետ, իսկ ԵՄ-ի հետ մերձեցումն անհամատեղելի է ԵԱՏՄ և ՀԱՊԿ համակարգերի հետ, ուստի հայ ժողովուրդը պետք է լավ մտածի, թե որքանով է իրեն ձեռնտու ՌԴ-ից հեռանալը:

Իրանը ևս բազմիցս հայտարարել է, որ Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության փոփոխությունները, մասնավորապես՝ սահմանների վերաձևման կամ արտատարածաշրջանային ուժերի ռազմական ներկայության ընդլայնման փորձերը, հակասում են իր ազգային անվտանգության շահերին:

Միևնույն ժամանակ Թուրքիան և Ադրբեջանը շարունակում են առաջ մղել տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակման և տնտեսական ինտեգրման սեփական տեսլականը, այդ թվում՝ Հայաստանի տարածքով տրանսպորտային կապերի ստեղծման նախաձեռնությունները, որոնք հայաստանյան քաղաքական և փորձագիտական շրջանակներում ստացել են իրարամերժ գնահատականներ: Հանրային և քաղաքական դիսկուրսում դրանք ներկայացվել են ինչպես տարածաշրջանային համագործակցության հնարավորություն, այնպես էլ՝ Հայաստանի ինքնիշխանության և անվտանգության հնարավոր ռիսկերի աղբյուր: Թուրքիան և Ադրբեջանը ՀՀ ընտրությունների ողջ ընթացքում իրենց սատարումն են հայտնել գործող վարչապետի և նրա ղեկավարած ուժին:

Այսպիսով, Հայաստանի ներքաղաքական զարգացումները, այդ թվում՝ ընտրական գործընթացները, տեղի են ունեցել ոչ միայն ներքին քաղաքական մրցակցության, այլև արտաքին դերակատարների շահերի բարդ փոխազդեցության պայմաններում, որի դեպքում իշխող կուսակցությունը, մեծ զգուշավորություն դրսևորելով իր իրական նպատակներն ու օրակարգը թաքցնելու հարցում, այնուամենայնիվ ակնհայտ հակված է վերցնել Թուրքիային և Ադրբեջանին սատարող արևմտյան ուղղությունը: Վերջիններիս հետ բարեկամության վեկտորի մասին են վկայում, օրինակ, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կողմից «Ադրբեջանը մեր անվտանգության երաշխավորն է»[6] խոսքը: Թշնամական հեռտորաբանությունից և գործողություններից չհրաժարվող պետության հետ առանց նախապայմանների Հայաստանի մերձեցման համար նրանք պատրաստ են զոհել այոց Ցեղասպանության հարցը, հեռացնում են Արարատը անձնագրից ու դրա մեջ դրվող պետական կնիքից, նենգափոխում են դպրոցներում դասավանդվող պատմությունը, Ադրբեջանի պահանջով պատրաստվում են փոփոխել Սահմանադրությունը: Ընդդիմության առավել առանցքային ուժերը հակադրվում են այս օրակարգին, կողմ են ավելի հավասարակշռված քաղաքականությանը և ՀՀ բնական դաշնակիցների՝ ՌԴ-ի և Իրանի հետ հարաբերությունները չփչացնելուն, և նրանց դեմ արշավը պայմանավորված է նաև այս համատեքստով:

[5] https://www.youtube.com/watch?v=4BJgQxjK7Ao
[6] https://www.youtube.com/watch?v=h9cocMDbLqE

Թեև սույն զեկույցը նպատակ չունի գնահատել արտաքին ուժերի իրական ազդեցության ծավալը կամ վերագրել նրանց ուղղակի մասնակցություն նկարագրվող գործընթացներին, աշխարհաքաղաքական այս միջավայրը կարևոր է հասկանալու համար այն բարձր բևեռացված քաղաքական մթնոլորտը, որի պայմաններում ձևավորվել են նախընտրական գործընթացներն ու հանրային ընկալումները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ՝ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Իշխանության գալով՝ Նիկոլ Փաշինյանն աստիճանաբար նվազեցրեց Սփյուռքի մասնակցությունը ՀՀ գործերին՝ նախևառաջ փակելով Սփյուռքի նախարարությունը[7]: Դրա փոխարեն ստեղծված Սփյուռքի հանձնակատարի գրասենյակի աշխատանքը Սփյուռքի առանցքային կառույցների ներկայացուցիչները գնահատում են որպես խիստ անարդյունավետ: Ըստ մամուլի տեղեկությունների՝ Սփյուռքում հանձնակատարի այցի մասին իմանում են միայն նրա հեռանալուց հետո: Խստացրել են ազգությամբ հայերի համար ՀՀ քաղաքացիություն ստանալու կարգը[8]:

2022թ. սկսած արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքից փաստացի զրկվել են Սփյուռքի հայտնի ներկայացուցիչներ և հասարակական գործիչներ: Նրանց թվում են Ֆրանսիայի Հայ դատի համակարգող խորհրդի համանախագահ Մուրադ Փափազյանը (14 հուլիսի 2022 թ.), Նիդեռլանդների ՀՅԴ ղեկավար Մասիս Աբրահամյանը (31 հուլիսի 2022 թ.), Սփյուռքի ակտիվիստ Սյունե Աբրահամյանը, ինչպես նաև ֆրանսահայ լրագրող Լեո Նիկոլյանը (2024 թ.): Հատկանշական է, որ Երևանի վարչական դատարանը հետագայում վերացրել է Փափազյանի և Աբրահամյանի նկատմամբ կիրառված մուտքի արգելքները՝ կասկածի տակ դնելով այդ որոշումների իրավաչափությունը: Այս դեպքերը Սփյուռքի մի շարք շրջանակների կողմից գնահատվել են որպես իշխանություններին քննադատող սփյուռքահայ գործիչների նկատմամբ ընտրովի սահմանափակումների դրսևորում:

Սփյուռքի հետ կապերի թուլացմանն էր մասամբ նաև ուղղված Հայ Առաքելական Եկեղեցու դեմ արշավը, որը նկարագրված է ներքևում:

Հեղինակների նշում և մեթոդաբանական պարզաբանում

Սույն այլընտրանքային զեկույցը մշակել են «Թուխմանուկ» ՀԿ-ի ղեկավար, իրավաբան Մարիամ Չախոյանը և քաղաքագետ Մայա Բարխուդարյանը:

Զեկույցում տեղ գտած իրադարձությունների շարադրանքը հիմնված է բաց աղբյուրների, մամուլի հրապարակումների, պաշտոնական հայտարարությունների, դատական ակտերի, միջազգային փաստաթղթերի և հեղինակներին հասանելի այլ տեղեկատվության վրա: Հեղինակները չեն հավակնում սպառիչ կերպով ներկայացնել 2026թ. հունիսի 7-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին նախորդած և դրանց հաջորդած ժամանակահատվածում արձանագրված բոլոր դեպքերը: Փոխարենը, փորձ է արվել առանձնացնել առավել բնութագրական և հանրային լայն արձագանք ստացած իրադարձությունները՝ դրանք դիտարկելով ընդհանուր քաղաքական և իրավական

[7] https://www.arfd.am/new/news/7250/
[8] https://armenpress.am/hy/article/1088731

համատեքստում և տալով դրանց իրավաքաղաքական գնահատական՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և ազատ ընտրությունների միջազգային ու ներպետական չափանիշների լույսի ներքո:

Զեկույցում արտահայտված գնահատականները հեղինակների մասնագիտական վերլուծության արդյունք են և չեն հավակնում փոխարինել իրավասու մարմինների փաստական կամ դատական եզրահանգումներին:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքական զարգացումները շարունակվում են, իսկ նոր իրադարձությունները գրեթե ամեն օր լրացուցիչ ազդեցություն են ունենում ներքաղաքական իրավիճակի և ճգնաժամային միտումների խորացման վրա, սույն զեկույցը պետք է դիտարկել որպես 2026թ. հունիսի 18-ի դրությամբ առկա իրողությունների ամփոփում, որը կարող է հետագայում ենթարկվել լրացումների և թարմացումների:

(1) Բռնաճնշումների առաջին ալիքը՝ կանխելով նոր քաղաքական ուժի ձևավորումը. «Սրբազան պայքար»

Դեռևս 2025թ. իշխանությունները քրեական հետապնդում նախաձեռնեցին «Սրբազան պայքար» շարժման առաջնորդ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի[9] և շարժման հետ առնչություն ունեցող 17 ակտիվ քաղաքացիների նկատմամբ՝ նրանց մեղադրելով ահաբեկչության և իշխանությունը յուրացնելու նախապատրաստության մեջ: Շարժումը ձևավորվել էր 2024թ. գարնանը՝ Տավուշում սահմանազատման գործընթացի դեմ բողոքի ակցիաների արդյունքում, իսկ հետագայում վերածվել էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը պահանջող լայն հանրային շարժման՝ համախմբելով հոգևորականների, հասարակական գործիչների, նախկին զինվորականների, տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների, քաղաքական ուժերի և քաղաքականապես չներգրավված քաղաքացիների:

Քրեական հետապնդման շրջանակում 18 անձանցից 17-ի նկատմամբ որպես խափանման միջոց էր ընտրվել կալանքը: Մեղադրանքները հիմնված էին ահաբեկչության նախապատրաստական գործողությունների վերաբերյալ իրավապահ մարմինների ներկայացրած օպերատիվ տվյալների և գաղտնալսումների վրա, որոնց արժանահավատությունը և ապացուցողական արժեքը վիճարկվել են պաշտպանության կողմի կողմից: Պաշտպանները և մի շարք անկախ իրավաբաններ մատնանշել են մեղադրանքների վերացական բնույթը, իրական բռնի գործողությունների կամ դրանք նախապատրաստելուն ուղղված որևէ առարկայական հիմքերի բացակայությունը, ինչպես նաև կալանքի անհրաժեշտության և համաչափության հիմնավորման հարցեր:

Միաժամանակ, քրեական հետապնդումն ուղեկցվել է պետական պաշտոնյաների կողմից շարժման առաջնորդի հասցեին հնչող հրապարակային վիրավորական և զրպարտչական արտահայտություններով, որոնք կասկածի տակ են դնում անմեղության կանխավարկածի պահպանման սկզբունքը, և նպատակ են հետապնդում հանրության շրջանում ձևավորել Բագրատ Սրբազանի և «Սրբազան շարժման» վերաբերյալ բացասական կարծիք: Մի քանիսի դեպքում Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը դիմել է դատարան՝ պաշտպանելու իր պատիվն ու արժանապատվությունը, և դատարանները բավարարել են ներկայացված հայցերը՝ արձանագրելով զրպարտության փաստը:

Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի[10] նկատմամբ իրականացված հանրային վարկաբեկման արշավի շրջանակում դատարանը բավարարել է նրա հայցն ընդդեմ Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Հանրային խորհրդի նախագահ Ստյոպա Սաֆարյանի[11]: Դատարանը հաստատված է համարել, որ Սաֆարյանը մի քանի հրապարակումներում Բագրատ Սրբազանին վերագրել է «խորը անասուն» արտահայտությունը, մինչդեռ գործի քննությամբ պարզվել է, որ տարածված ձայնագրության մեջ այդ խոսքերը Սրբազանին չեն պատկանում, և վերջինս երբևէ նման արտահայտություն չի հնչեցրել: Դատարանը արձանագրել է զրպարտության փաստը և սահմանել 100 000 դրամի չափով ոչ նյութական վնասի հատուցում, թեև հայցվորը պահանջել էր 3 միլիոն դրամ փոխհատուցում: Հատկանշական է, որ 2025թ. հուլիսին Բագրատ Սրբազանը վիրավորանքի և զրպարտության հիմքով դատական հայցեր էր ներկայացրել նաև մի շարք այլ քաղաքական և հանրային գործիչների դեմ, այդ թվում՝

[9] https://times.am/1017527/
[10] https://hetq.am/hy/article/175755
[11] https://www.aravot.am/2026/06/10/1562820

առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի[12], «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանի և ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանի, քաղաքագետ Հարություն Մկրտչյանի նկատմամբ: Հայցեր կան ներկայացված նաև «Հանրապետություն» կուսակցության Երևանի ավագանու անդամ Անի Խաչատրյանի, Հանրային հեռուստաընկերության հաղորդավար Պետրոս Ղազարյանի, նախարար Դավիթ Խուդաթյանի, ՔՊ անդամ Հասմիկ Հակոբյանի, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի և ՔՊ-ական Վաղարշակ Հակոբյանի դեմ[13]: Այս հանգամանքը վկայում է, որ Սրբազանի հասցեին հնչեցված ծանր մեղադրանքները և վիրավորական բնույթի պնդումները ուղղորդվել են իշխանական ուժերի կողմից և միտված են եղել բացասական հանրային կարծիք ձևաորևմանը և հանրային դաշտում այնպիսի կարծիքներ լայնորեն շրջանառելուն, ներառյալ վիրավորական արտահայտություններ՝ «ինքնասառեցված տերտեր», «շեղված հոգևորական», «մերօրյա Ուսամա բեն Լադեն», «տասովչիկ»[14], որոնք առանձին դեպքերում արդեն դատարանի կողմից ճանաչվել են որպես զրպարտություն:

Հանրության կողմից «18 արդարների գործ» հռչակված դատավարության վերաբերյալ մամուլում և քաղաքացիական հասարակության շրջանակներում շարունակվում են թեժ քննարկումները մեղադրական եզրակացության փաստական հիմքերի բավարարության, ներկայացված ապացույցների արժանահավատության և քրեական հետապնդման հնարավոր քաղաքական ենթատեքստի շուրջ: Թեև գործի վերջնական իրավական գնահատականը կարող է տրվել միայն անկախ դատարանի կողմից, հանրության շրջանում դրա ընթացքը լուրջ մտահոգություններ է առաջացրել նախընտրական շրջանում քաղաքական բազմակարծության, ընդդիմադիր գործունեության ազատության և քրեական արդարադատության գործիքակազմի հնարավոր ընտրովի կիրառման առնչությամբ: Այս գործով ամենշաբաթյա դատական նիստերի մշտապես բազմամարդ լինելը վկայում են «Սրբազան շարժման» նկատմամբ հանրության ունեցած մեծ սատարման և իշխանությունների անարդար ու անազնիվ գործելաոճի հետ անհամաձայնության մասին:

Բագրատ Սրբազանի դեպքը բնորոշում է իշխանությունների գործելաոճը, որն ըստ էության կիրառվում է այլ առանցքային քաղաքական դերակատարների նկատմամբ՝ նրանց քաղաքականապես չեզոքացնելու և մրցակցությունից դուրս մղելու նպատակով:

[12] https://www.panorama.am/en/news/2025/07/22/archbishop-lawsuit/3136866
[13] https://panarmenian.net/m/eng/news/324835
[14] https://arm.sputniknews.ru/20260512/bagrat-srbazany-zrpartutjan-gvortsvov-haghtel-e-qaghaqaget-harutjun-mkrtchjanin-102068380.html

(2) 2026թ. ԱԺ ընտրություններին իշխանության գլխավոր հակառակորդ, ընդդիմադիր կուսակցության արաջնորդ Սամվել Կարապետյանի նկատմամբ քրեական հետապնդումը և սեփականության իրավունքի նկատմամբ ոտնձգություններ

2025 թ. հունիսի 18-ին, Հայ Առաքելական եկեղեցուն հրապարակային աջակցություն հայտնելուց և «մեր ձևով» միջամտելու մասին հայտարարությունից կարճ ժամանակ անց, «Տաշիր» ընկերությունների խմբի հիմնադիր, գործարար Սամվել Կարապետյանի նկատմամբ նախաձեռնվեց քրեական հետապնդում, և նա կալանավորվեց:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նրա՝ «մեր ձևով» կպաշտպանենք Եկեղեցին» հայտարարությունը որակեց որպես ազգային «անվտանգության սպառնալիք»: Միաժամանակ կառավարությունը հայտարարեց Կարապետյանին պատկանող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության ազգայնացման գործընթաց սկսելու մասին: Գործարար Սամվել Կարապետյանի իրավաբանական թիմը դիմել էր միջազգային արբիտրաժային տրիբունալ (Ստոկհոլմի առևտրային պալատի արբիտրաժային ինստիտուտ (SCC)), որը պարտավորեցրել էր ՀՀ կառավարությանը ձեռնպահ մնալ ընկերության բռնագրավման և ազգայնացման քայլերից՝ ճանաչելով դրանք անօրինական: Ուշագրավ է, որ թեև 2026 թ. հունվարին ձևավորված հիմնական արբիտրաժային կազմը հաստատել է արտակարգ արբիտրի որոշման պարտադիր ուժը՝ մերժելով Հայաստանի այն փաստարկները, թե արտակարգ արբիտրաժի ընթացակարգի կիրառումն անօրինական է եղել: Արբիտրաժային տրիբունալը իր որոշման մեջ պահանջել է նաև ՀՀ կառավարությունից ձեռնպահ մնալ ցանկացած հետագա քայլերից, որոնք ուղղված են ՀԷՑ-ի էքսպրոպրիացիային (սեփականազրկմանը): Այդուհանդերձ, ՀՀ իշխանությունները հրաժարվում են ենթարկվել միջազգային ատյանի որոշմանը՝ չնայած դրա պարտադիր բնույթին[15]»:

Միևնույն ժամանակ, 2025 թ. նոյեմբերի 17-ին Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) զրկեց ՀԷՑ-ին էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիայից[16], քանի որ քննությունների արդյունքում հայտնաբերվեցին խախտումներ, նախաձեռնվեց քրեական վարույթ:

Ուշագրավ է, որ Սամվել Կարապետյանի և ՀԷՑ-ի նկատմամբ նախաձեռնված քրեական և վարչական գործընթացները ուղեկցվել են իշխանության ներկայացուցիչների կողմից իրականացվող ակտիվ հանրային հաղորդակցական արշավով, որի շրջանակներում գործարարը և նրա հետ փոխկապակցված ընկերությունը ներկայացվել են որպես հասարակության հաշվին հարստացած և քաղաքացիներին տարիներ շարունակ թալանած կառույցի մարմնավորում: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ «Հայաստանում չի եղել մի ընտանիք, որից ՀԷՑ-ը փող չի գողացել», ինչպես նաև պնդել է, որ ընկերության գործունեությունը կարող էր միտված լինել երկրում քաղաքական դժգոհություններ գեներացնելուն՝ էներգետիկ ճգնաժամ ստեղծելու միջոցով: ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանը, իր հերթին, հրապարակայնորեն հայտարարել է, որ ՀԷՑ-ը «անկուշտի պես թալանել է» պետական և համայնքային հիմնարկները՝ հավելագրումներ կատարելով

[15] https://news.am/hy/news/926790

[16] https://arka.am/am/news/economy/hayastani-hanrayin-tcarayutyunnere-kargavorogh-handznazhoghove-dadaretsrets-hets-i-elektraenergiayi-bashkhman-litsenzian/

անգամ ռուսական 102-րդ ռազմաբազայի սպառած էլեկտրաէներգիայի հաշվին: Միաժամանակ ՀԷՑ-ի նախկին գլխավոր տնօրենի պաշտոնակատար Դավիթ Ղազինյանը պնդել է, որ առանձին հավելագրումների կամ ենթադրյալ խախտումների առկայությունը չի կարող ավտոմատ կերպով վերագրվել սեփականատիրոջը, իսկ ամբողջ գործընթացը գնահատել է որպես իրավական հարթությունից դուրս եկած քաղաքական արշավ՝ ուղղված Սամվել Կարապետյանի հեղինակազրկմանը և հանրային ընկալման մեջ նրա նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը: Նման հռետորաբանությունը, որն դեռևս դատարանի կողմից չքննված մեղադրանքների պարագայում, կարող է դիտարկվել որպես անմեղության կանխավարկածի և հանրային չեզոքության սկզբունքների տեսանկյունից մտահոգիչ երևույթ:

Ստացվում է, որ Սամվել Կարապետյանը 2025 թ. հունիսի 18-ից շուրջ յոթ ամիս անցկացրել է ԱԱԾ մեկուսարանում: 2026թ. հունվարի 18-ին նա ազատ է արձակվել մեկուսարանից, սակայն նրա նկատմամբ կիրառվել է տնային կալանք, որը հետագայում երկարաձգվել է, այդ թվում՝ 2026թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական փուլում՝ սահմանափակելով նրա քարոզարշավին և հետընտրական զարգացումներին լիակատար մասնակցության իրավունքը:

Այսպիսով, ստեղծված իրավիճակում Սամվել Կարապետյանը,իր կողմնակիցների ներկայացմամբ, քաղաքականություն մտավ հարկադրված՝ ձևավորելով «Ուժեղ Հայաստան» քաղաքական կուսակցությունը, որը 2026թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցեց որպես ամենաբարձր հանրային վստահությունը վայելող ընդդիմադիր ուժ: Կարապետյանն ու նրա քաղաքական թիմը բազմիցս հայտարարել են, որ նրա ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում պայմանավորված է երկրում տեղի ունեցող զարգացումների նկատմամբ անտարբեր չմնալու և, իրենց բնորոշմամբ, քաղաքական ու իրավական ճնշումներին դիմակայելու անհրաժեշտությամբ: Նրա մերձավոր քաղաքական գործընկերների փոխանցմամբ՝ Կարապետյանը «գնալու է մինչև վերջ՝ իր դեմքով և իր անունով»[17], չնայած իր նկատմամբ հարուցված քրեական գործերին և ազատության սահմանափակմանը: Ինքը՝ Կարապետյանը, հայտարարել է, որ նույնիսկ կալանքի ընթացքում իրեն առաջարկվել է առավել բարենպաստ պայմաններ՝ քաղաքականությունից հրաժարվելու դիմաց[18], սակայն ինքը մերժել է այդ առաջարկները՝ ընդգծելով, որ շարունակելու է պայքարը մինչև վերջ՝ հանուն Հայաստանի ապագայի վերաբերյալ իր պատկերացումների իրականացման:

Այս հանգամանքները թույլ են տալիս պնդել, որ Սամվել Կարապետյանի քաղաքական ակտիվացումը տեղի ունեցավ ոչ թե որպես նախապես պլանավորված կուսակցական կարիերայի արդյունք, այլ որպես արձագանք իր նկատմամբ իրականացվող հետապնդումներին և երկրում ձևավորված քաղաքական միջավայրին, որը, նրա և իր կողմնակիցների գնահատմամբ, պահանջում էր անձնական ներգրավվածություն և դիմադրություն:

Քրեական հետապնդման, քաղաքական ակտիվացման և խոշոր սեփականության նկատմամբ պետական միջամտության այս ժամանակային համընկնումը հանրային և մասնագիտական շրջանակներում առաջացրեց մտահոգություններ նախընտրական շրջանում ընտրողի արդարադատության, սեփականության իրավունքի պաշտպանության և քաղաքական մրցակցության վրա հնարավոր զսպող ազդեցության վերաբերյալ:

---

[17] https://www.azatutyun.am/a/samvel-karapetyany-gnalou-e-minchev-verj-ir-demkov-ev-ir-anounov-hartsazrouyts-narek-karapetyani-het/33687041.html

[18] https://mamul.am/am/news/359260

(3) Բռնաճնշումներ քաղաքական ուժերի նկատմամբ

2026թ. նախընտրական շրջանում վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ռոբերտ Քոչարյանին, Սամվել Կարապետյանին և Գագիկ Ծառուկյանին բնութագրում էր որպես «եռագլուխ հրեշ»[19]*՝ նրանց ներկայացնելով որպես նախկին համակարգի, պատերազմի և կոռուպցիոն անցյալի մարմնավորում:*

Ողջ քարոզարշավի ընթացքում Փաշինյանի և նրա թիմակիցների բառապաշարը եղել է համեմված ծաղրական, կոշտ, քաղաքական հակառակորդների անմեղության կանխավարկածը ոտնահարող մեղադրական արտահայտություններով, որոնք հաճախ անցնում էին վիրավորանքի ու շրջանցում թույլատրելի բարեկրթության սահմանները[20]: Հաճախ հնչել են նաև սպառնալիքներ՝ «կկրզցնեմ», «կփռեմ ասֆալտին», «գլուխները պատով են տվել», «հաստավզերը», «էդ ընտրակաշառատուների քոքը պըտի կտրվի»: Նրանց վերագրեց ինչ-որ արտահայտություններ՝ առանց ներկայացնելու ապացույցներ՝ «ցուցակներ են տալիս, հետևներից ասում են՝ էդ շունուշանգյալները», «փողը տալիս են ու վերաբերվում են որպես մարմնավաճառի և կլիենտի հարաբերությունների»: Իրեն բնութագրելով որպես «խաղաաղություն բերող», «ժողովրդի ծոցից դուրս եկած» «ժողովրդի ծառա»: «Քաղաքացիական պայմանագրի» անդամ-պատգամավորները չէին խորշում իրենց քաղաքական հակառակորդների արտաքինը ծաղրող արտահայտություններից: Այսպես, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ու Արփինե Դավոյանի «ծաղրական տեսանյութը[21]» Սամվել Կարապետյանի ընտանիքին պատկանող «Տաշիր գրուպի» սրճարաններից մեկից: Ուշադրության է արժանի երեկոները բլոգեր դարձած ԱԺ պատգամավոր Վահագն Ալեքսանյանի ֆեյսբուքյան տեսադարանը[22], որտեղից կարելի է պատկերացում կազմել ՔՊ-ի վերբալ հարձակումների ողջ արսենալի մասին: Նրա իր երեկոյան ելույթներից մեկում ծաղրում է «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Նարեկ Կարապետյանի արտաքինը[23]:

Նախընտրական փուլի ընթացքում քրեական հետապնդումների թիրախ դարձան մի շարք ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչներ և նրանց ընտրական թիմերի անդամներ՝ ստեղծելով քաղաքական մրցակցության պայմանների անհավասարության տպավորություն: Նրանք, ովքեր սկսում էին քիչ թե շատ ժողովրդականություն վայելել, ՔՊ առաջնորդն ու նրա արբանյակները սկսեցին պիտակավորել որպես ԿԿԲ-ի գործակալ՝[24] քրեական գործի հարուցումը նախօրյակին ազդարարելով նախընտրական ելույթի ժամանակ:

2026թ. մայիսին պետական դավաճանության և լրտեսության մեղադրանքներով ձերբակալվեց «Մայր Հայաստան» կուսակցության առաջնորդ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի երկրորդ համար Անդրանիկ Թևանյանը[25]: Քրեական գործը հարուցվեց վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ նախընտրական հանրահավաքի ընթացքում հրապարակայնորեն հայտարարելուց անմիջապես հետո, որ Ազգային

[19] https://www.youtube.com/watch?v=E1n_mpXSyvU
[20] https://www.youtube.com/watch?v=E1n_mpXSyvU
[21] https://www.facebook.com/reel/1757703755217122
[22] https://www.facebook.com/VahagnAl/reels/
[23] https://www.facebook.com/reel/1980996756635680
[24] https://www.youtube.com/shorts/otyVbwhmB-I
[25] https://civilnet.am/hy/news/1011975

անվտանգության ծառայությունը հաջորդ օրը համապատասխան հաղորդում կներկայացնի Քննչական կոմիտե՝ նրա նկատմամբ պետական դավաճանության հոդվածով վարույթ նախաձեռնելու ակնկալիքով: Դրան հաջորդեցին խուզարկություններ «Մայր Հայաստան» կուսակցության կենտրոնակայանում և Անդրանիկ Թևանյանի բնակարանում, քրեական հետապնդում և երկամյա կալանքը: Պաշտպանության կողմը հայտարարեց, որ գործի նյութերում բացակայում են պետական գաղտնիքի հավաքման կամ փոխանցման հիմնավոր ապացույցներ, և մեղադրանքը կրում է քաղաքական բնույթ:

Նախընտրական փուլում իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը: 2026 թ. ապրիլի 16-ին ընտրակաշառքի գործի շրջանակում ձերբակալվեցին և հետագայում վարչական հսկողության ենթարկվեցին կուսակցության անդամներ Գոհար Ղումաշյանը և Վերժինե Ստեփանյանը[26]: Նույն գործով ընդհանուր առմամբ ձերբակալվել էր 14 անձ: Քաղաքական ուժի ներկայացուցիչները պնդում էին, որ գործընթացը նպատակ ունի վարկաբեկել իրենց նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը, մինչդեռ իշխանությունները հայտարարում էին ընտրական իրավախախտումների դեմ պայքարի անհրաժեշտության մասին:

Մամուլի հրապարակումների համաձայն՝ Գոհար Ղումաշյանը ձերբակալման պահին ուներ ընդամենը երկու ամսական, կրծքով կերակրվող երեխա, սակայն ազատությունից զրկելու հարցը քննարկելիս այդ հանգամանքը պատշաճ կերպով հաշվի չի առնվել: Դեպքն ուղեկցվել է իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչների կոշտ հրապարակային արձագանքով. մասնավորապես, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի կողմից հնչեցված արտահայտությունները, որոնցում նա ծաղրական խոսույթ էր գործածել կերակրող մոր հասցեին[27], լայն քննադատության արժանացան՝ որպես քաղաքական հակառակորդի նկատմամբ անհարգալից և անմարդկային վերաբերմունքի դրսևորում: Այս հանգամանքները լրացուցիչ մտահոգություններ են առաջացրել քաղաքականապես զգայուն գործերով խափանման միջոցների համաչափության, երեխայի լավագույն շահի պաշտպանության և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից կիրառվող հռետորաբանության վերաբերյալ:

Նախընտրական թեժ փուլում սկսել էր աչքի ընկնել նաև «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ, նախկին զինվորական արցախյան բոլոր պատերազմների մասնակից և հայտնի հետախույզ Կանդազը[28]՝ Արթուր Ավանեսյանը[29], որին երկու ամսով[30] կալանավորեցին: Ավելի ուշ ձերբակալվեց «Ուժեղ Հայաստան» կուսակցության ընտրացուցակի երկրորդ համարը՝ Ալիկ Ալեքսանյանը, ով կանխազգալով իր հնարավոր ձերբակալությունը նախօրոք տեսանյութ էր պատրաստել, որտեղ նշում էր դրա իրական պատճառի մասին: Քրեական վարույթ է հարուցվել նաև կուսակցության այլ ԱԺ թեկնածուների նկատմամբ: Արթուր Աբրահամյանի և Հայկ Ավագյանի դեպքում խափանման միջոց ընտրվեց կալանքը և հայտարարվեց հետախուզում[31]: («Ուժեղ

[26] https://regionstv.am/37375.html
[27] https://tert.am/am/news/2026/04/17/arusyak-julhakyan/4267631?utm_source=chatgpt.com
[28] https://www.youtube.com/watch?v=CdyR4vH0irk
[29] https://www.youtube.com/watch?v=DW4BFhr2Q2A
[30] https://www.youtube.com/shorts/YChNYYy924M
[31] https://www.aravot.am/2026/06/11/1563008/

Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածուներ Հայկ Ավագյանին և Արթուր Աբրահամյանին կալանավորելու որոշում է կայացվել, հունիսի 11, 2026 , Առավոտ օրաթերթ) Զուգահեռաբար մամուլում տեղեկություններ հրապարակվեցին ընդդիմադիր քաղաքական ուժերի նախընտրական շտաբերի ղեկավարների և ակտիվիստների նկատմամբ իրականացվող քննչական գործողությունների, խուզարկությունների և ձերբակալությունների մասին: Ասուլիսի[32] ժամանակ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Գոհար Մելոյանը[33] նշել է նախընտրական փուլում կուսակցության ավելի քան 780 անդամի ձերբակալության մասին, որոնց թվում էին նաև տարեց կանայք: Ըստ Մելոյանի՝ լայնածավալ ձերբակալությունները նպատակ էին հետապնդում ձևավորել վախի մթնոլորտ:

Այս ծավալի քրեական և վարչական հետապնդումը, այդ թվում նաև՝ վստահված անձանց և համակիրների ձերբակալումը, ոչ միայն կուսակցության աշխատանքի համար լրջագույն խոչընդոտներ է ստեղծել, այլ նաև նպատակ է ունեցել առաջացնել հանրային բացասական վերաբերմունք, անվստահություն և վախ այդ կուսակցությանը աջակցություն ցուցաբերող անձանց շրջանում:

Ռեպրեսիվ գործողությունները չեն շրջանցել նաև վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից «եռագլուխ հրեշ» որակված մյուս խոշոր ընդդիմադիր ուժը՝ «Հայաստան» դաշինքը, որի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանի դեմ արշավը երբեք չի մարել: 2018թ. իշխանափոխությունից անմիջապես հետո երկրորդ նախագահը ներգրավվեց Մարտի 1-ի գործով[34] քրեական հետապնդման մեջ՝ մի քանի անգամ կալանավորվելով և ազատ արձակվելով: 2021թ. Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց նրա նկատմամբ կիրառված Քրեական օրենսգրքի 300.1 հոդվածը, ինչի արդյունքում հիմնական մեղադրանքը դադարեցվեց: Այդուհանդերձ, հետագա տարիներին Ռոբերտ Քոչարյանը շարունակեց մնալ իշխանությունների քաղաքական հռետորաբանության հիմնական թիրախներից մեկը՝ ներկայացվելով որպես «հին համակարգի», պատերազմի վտանգի և «եռագլուխ հրեշի» խորհրդանիշ: Նախընտրական շրջանում նման հռետորաբանությունը նպաստել է նրա և նրա գլխավորած քաղաքական ուժի նկատմամբ դեմոնիզացիային և հանրային անվստահության և մթնոլորտի ձևավորմանը: Հատկանշական է, որ ընտրության օրը «Հայաստան» դաշինքը պաշտոնապես հայտարարեց[35], որ առավոտից իրավապահ մարմինները բերման են ենթարկում և/կամ ձերբակալում են իրենց նախընտրական շտաբների անդամներին ու պատասխանատուներին՝ տարբեր պատճառաբանություններով, այդ թվում՝ որպես վկա հարցաքննվելու պատրվակով: Դաշինքի ներկայացուցիչների պնդմամբ՝ այդ գործողությունները նպատակ ունեին խաթարելու շտաբների աշխատանքը և խոչընդոտելու ընտրական գործընթացին իրենց լիարժեք մասնակցությունը: Հետագայում ընդդիմության ներկայացուցիչները հայտարարեցին, որ մարդկանց մի մասին ժամեր շարունակ պահել են հարցաքննությունների, ընդ որում՝ երկար ժամանակ փաստաբանները հնարավորություն չեն ունեցել մասնակցել դրանց, ապա ազատ են

[32] https://www.azatutyun.am/a/nakhyntrakan-pouloum-ouzhegh-hayastanits-mot-700-hogi-e-dzerbakalvel-meloyan/33777450.html

[33] https://www.youtube.com/watch?v=s8ClYLPqxy0

[34] https://mediamax.am/am/news/society/29575

[35] https://civilnet.am/hy/news/1012313

արձակել նրանց՝ առանց մեղադրանք ներկայացնելու: Թեև իշխանությունները նման գործողությունները ներկայացնում էին որպես իրավապահ միջոցառումներ, դրանց ժամանակագրությունը և ընտրական օրվա հետ համընկնումը լուրջ մտահոգություններ են առաջացնում ընտրական գործընթացի ազատության և քաղաքական մրցակցության հավասար պայմանների ապահովման տեսանկյունից:

Հատուկ մտահոգություն առաջացրեցին իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանի հրապարակային հայտարարությունը[36], որի ժամանակ վերջինս ակնարկում էր քաղաքական հակառակորդների հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցությունների նկատմամբ իրավապահ մարմինների վերահսկողության լայն հնարավորությունների մասին՝ հայտարարելով, որ «բոլորիդ [գաղտնա]-լը-սում ենք»: Նման հայտարարությունները, անկախ դրանց բովանդակային մեկնաբանությունից, նպաստում են քաղաքական գործընթացների մասնակիցների շրջանում վախի տարածմանը և խոսքի ինքնգրաքննության (self-censorship) ձևավորմանը:

Հետընտրական հաշվեհարդար. «սաղիդ կկոխեմ ծակը» խոստման իրագործում

Ընտրություններից հետո իշխանության ներկայացուցիչների կողմից շարունակվում է ընդդիմադիր ուժերի նկատմամբ կոշտ հաշվեհարդարի ենթատեքստ ունեցող հռետորաբանությունը: Հանրային տիրույթում շրջանառվել են հայտարարություններ, որոնցում քաղաքական հակառակորդների հասցեին հնչեցվել են «պատժելու», «պատասխանատվության ենթարկելու», «քաղաքական դաշտից հեռացնելու», բնույթի ձևակերպումներ: Ընդդիմադիր շրջանակները դրանք գնահատել են որպես հետընտրական ճնշումների և քաղաքական հաշվեհարդարի մթնոլորտի ձևավորման դրսևորումներ:

Հակառակորդ քաղաքական ուժերի նկատմամբ վերսկսված լայնածավալ քրեական հետապնդումները առնչվում են մասնավորապես Գագիկ Ծառուկյանի, Սամվել Կարապետյանի քաղաքական թիմերի և այլ ընդդիմադիր շրջանակների ներկայացուցիչների հետ: Ընտրությունից կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ երեք առաջնորդների ելքը ՀՀ-ից սահմանափակվել է:

Ընտրությունից հետո տիկնոջ հետ 3-օրյա հանգստի մեկնող Գագիկ Ծառուկյանին օդակայանում հասկացրել[37] էին, որ նրան արգելված է երկիրը լքելը: Նույն օրը, հունիսի 9-ին ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծարուկյանի[38] դեմ քրական գործ հարուցվեց:

Հունիսի 12-ին Նարեկ Կարապետյանը[39] «Ուժեղ Հայաստան» կուսակցության ԱԺ թեկնածության ցուցակի առաջին համարը, հայտարարեց, որ իրեն թույլ չե տվել ՀՀ սահմանը հատել: Նարեկ Կարապետյանը պատրաստվում էր մեկնել Լարսի միջանցք՝ իրավիճակը տեղում ուսումնասիրելու նպատակով:

---

[36] https://www.facebook.com/reel/1748410002994257
[37] https://www.aravot.am/2026/06/09/1562543/
[38] https://armlur.am/1567346/
[39] https://alphanews.am/narek-karapetyani-elqi-argelq-chi-exel/

Հունիսի 15-ին պարզ դարձավ, որ Ռոբերտ Քոչարյանը ևս չի կարող լքել երկիրը[40], պատճառն այդ պահին չէին պարզաբանել: Նրա իրավաբանական թիմը այսպիսի արգելքը որակում է որպես ապօրինի: Հունիսի 16-ին ՀՀ դատախազությունը միջնորդություն էր ներկայացրել ԿԸՀ-ին Ռոբերտ Քոչարյանի անձեռնմխելիությունը չեղարկելու վերաբերյալ՝ նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու նպատակով, ինչը ԿԸՀ-ն բավարարել էր հունիսի 17-ին[41]: «Հայաստան» դաշինքի գրասենյակից հայտնել են, որ երկու օր առաջ իրավապահ մարմիններից ճշտել էին՝ որևէ նոր քրեական գործ հարուցված չի եղել[42]:

Բացի այդ, հունիսի 16-ին ՀՀ դատախազությունը միջնորդություն էր ներկայացրել ԿԸՀ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ԱԺ պատգամավորի թեկնածու Դավիթ Ղազինյանին անձեռնմխելիությունից զրկելու՝ նրան քրեական հետապնդման ենթարկելու նպատակով: Հունիսի 17-ին ԿԸՀ համաձայնությունը ստանալուն պես Դավիթ Ղազինյանը ձերբակալվեց[43]:

Այս հանգամանքները հանրային և մասնագիտական շրջանակներում ընկալվում է որպես **նախընտրական շրջանում հնչեցված սպառնալիքների իրագործում** և ընտրովի արդարադատության դրսևորում: Ուշագրավ է, որ այս գործողություններին նախորդել են Փաշինյանի հրապարակային հրահանգները: Որպես ասվածի ապացույց հրապարակում ենք հունիսի 11-ին տրված ասուլիսի ժամանակ հնչած նրա խոսքն ամբողջությամբ, քանի որ այն պարունակում է մի շարք ուշագրավ դրվագներ: Այսպես, Նիկոլ Փաշինյանը[44] իրեն բնորոշ ծաղրական, նվաստացնող բառապաշարով, պատասխանելով լրագրողի այն հարցին, թե արդյոք փորձ է արվել քաղաքական գործարք առաջարկել Գագիկ Ծառուկյանին, պատասխանել է.

«***Գագիկ Ծառուկյանին, որ գործարք առաջարկեինք, ծնկաչոք էդ գործարքին կգար: Ասենք Գագիկ Ծառուկյանին ամբողջ կյանքում գործարք առաջարկող չի եղել, դրա համար էլ որքի նման ընկել ա աշխարհե-աշխարհ գործարք ա փնտրել, հետո պարզվել ա ընդամենը իրան հավաքագրել են, ինքը դրանից տեղյակ էլ չի: Ո՞վ առում գործարք առաջարկել. Գագիկ Ծառուկյանը կխնդրի, որ ես իրան գործարք առաջարկեմ, Գագիկ Ծառուկյանը ստոյկա կտա, որ ես գործարք առաջարկեմ իրան. էդ ինչի՞ մասին ա խոսքը***»:

Ուշագրավ է, որ Փաշինյանը ընդդիմությանը անհիմն կերպով մեղադրեց «100 տոկոսով ձայները կաշառքով ստանալու» մեջ, այն դեպքում երբ իր ստացած ձայները «100 տոկոսով օրգանիկ են».

---

[40] https://www.azatutyun.am/a/robert-kocharyanin-%D6%85danavakayanoum-argelel-en-lkel-erkiry/33780246.html
[41] https://www.panorama.am/am/news/2026/06/17/%D4%B1%D6%80%D5%A1%D5%B4-%D5%95%D6%80%D5%A2%D5%A5%D5%AC%D5%B5%D5%A1%D5%B6/3162040
[42] https://tert.am/am/news/2026/06/17/robert-qocharyan/4274356
[43] https://arm.sputniknews.ru/20260617/davit-ghazinjany-dzerbakalvel-e-103589859.html
[44] https://www.youtube.com/shorts/2zMKsWYNMm8

«Երևի միայն իրենց տնեցիների ձայները չեն առել, չնայած էդ էլ կասկածում եմ: Խախտումներ, այո՛, եղել են, որովհետև էդ երեք ուժը խորհրդարան մտնելու շեմը պետք ա չհաղթահարեր: Անկեղծ ասած՝ եթե մանդատները չվերցնեն, գոնե 100 տոկոս լեգիտիմ խորհրդարան կունենանք, թե չէ ստիպված ենք լինելու տեսնել խորհրդարանի ամբիոններին փողի կալոռներ փռած, որոնք որևէ այլ քաղաքական արժեք չունեն. նրանք չեն անցել շեմը, նրանք անցել են փողի շեմը»:

Այնուհետև Փաշինյանը անցավ դատական համակարգին սպառնալուն՝ անուղղակի կերպով պահանջելով վերջինից հետապնդման ենթարկել և պատժել իր քաղաքական հակառակորդներին՝ սեփական անձի նկատմամբ հաշվեհարդարից խուսափելու և սեփական կաշին փրկելու համար.

«Եւ էլի եմ ասում. մեր դատախազական համակարգը պետք ա պատասխան տա. էս ընտրություններում ընտրակաշառքի մեջ բռնված ցանկացած ոք մինչև հաջորդ ընտրությունների արդյունքներն ամփոփելը պտի բանտում լինի: Եթե ոչ, ուրեմն դատախազական համակարգը գործում ա ընդդեմ պետության, և պետությունը պետք ա արձագանքի: Հայաստանի Հանրապետությունը պտի միջոցներ ձեռնարկի էդ մաֆիան արմատախիլ անելու ուղղությամբ: Որովհետև պտի պատասխան տան. ի՞նչ ա նշանակում, ասենք, բռնել-արդարացնել Գագիկ Ծառուկյանին ընտրակաշառքի գործով: Որևէ մեկն ուզում ա ասի, որ Գագիկ Ծառուկյանին բռնել ա ու ՁՐԻ արդարացրե՞լ ա. համակարգին եմ մեղադրում կոռումպացված լինելու մեջ»:

Այս հռետորաբանությունն իր արձագանքը գտավ հենց նույն օրը՝ երեկոյան: ԲՀԿ ցուցակով անցնող և Մայր Հայաստան կուսակցության անդամ Արեգնազ Մանուկյանը[45] տեսանյութ էր հրապարակել, թե ինչպես են իրավապահ աշխատակիցները ներխուժում իրենց բնակարան՝ առանց ներկայացնելու դրա համար իրավական հիմքերը[46]:

Թեև ընտրական իրավախախտումների և ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների արդյունավետ քննությունը պետության պարտականությունն է, նման գործողությունների ժամանակագրությունը, ընտրողական բնույթը և դրանց ուղեկցող քաղաքական հաճախ բարեկրթության նորմերը սահմանազանցող ու գռեհիկ հռետորաբանությունը լուրջ հարցեր են առաջացնում քաղաքական բազմակարծության, իրավապահ մարմինների անկախության և ընտրական գործընթացի հավասար պայմանների ապահովման առումով:

(4) Մամուլի, ազատ խոսքի սահմանափակում, այդ թվում նաև՝ ակադեմիական միջավայրում

Հանրապետության ողջ տարածքում հեռարձակվող լրատվամիջոցների բազմազանությունը նվազեցվել է ընդդիմության հետ փոխկապակցված «Հ2»-ը և «Երկիր

[45] https://www.facebook.com/share/v/1F1CjpKAtF/
[46] https://www.facebook.com/sonahayuhy/videos/1688697109124140

Մեդիա»-ն 2021-2023 թվականներին վերգետնյա եթերային հեռարձակման իրավունքից զրկելու[47] արդյունքում:

2026թ. սկզբին դրանց թվին է ավելացել Հայ Առաքելական Եկեղեցու հետ փոխկապակցված «Շողակաթ»[48] հեռուստաընկերությունը: «Շողակաթ» հեռուստաընկերությունը զրկվել է հանրային հեռարձակման իրավունքից և դադարեցրել գործունեությունը թվային ցանցում՝ ՀՀ կառավարության 2025թ. դեկտեմբերի 25-ի որոշման հիման վրա, որով լուծարվել է «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն: Այս որոշմանը նախորդել էին 2025թ. հոկտեմբերի 24-ին «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում կատարված փոփոխությունները, որոնցով հանրային հեռարձակողների նվազագույն թիվը երեքից կրճատվել էր մինչև երկու, իսկ կրթական-մշակութային ուղղվածությամբ առանձին հանրային հեռարձակողի առկայության պարտադիր պահանջը վերացվել էր:

Մեդիա բազմակարծության սահմանափակման վերաբերյալ մտահոգությունները տեղ են գտել նաև միջազգային հեղինակավոր դիտորդական առաքելության պաշտոնական փաստաթղթերում: Այսպես, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ/ODIHR) 2026 թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ իր միջանկյալ զեկույցում[49] արձանագրել է հեռարձակվող մեդիայի բազմակարծության նեղացման վերաբերյալ մտահոգությունները: Զեկույցում մասնավորապես նշվում է, որ առաքելության զրուցակիցները մտահոգություն են հայտնել ընդդիմության հետ ասոցացվող H2 և «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունների՝ համապետական վերգետնյա հեռարձակման լիցենզիաների կորստի, ինչպես նաև 2025թ. օրենսդրական փոփոխություններից հետո Հայ Առաքելական Եկեղեցու հետ կապվող «Շողակաթ» հեռուստաընկերության փակման առնչությամբ:
Քարոզարշավի ողջ ընթացքում, եւ բուն քվեարկության օրը իշխող ուժի կողմից բազմաթիվ խախտումներ արձանագրած՝ News.am–ի լրագրող Նարեկ Խաչատրյանը[50] ընտրության հենց հաջորդ օրը վարժական հավաքներին մասնակցելու ծանուցում է ստացել: Վերջին բացահայտումը քվեարկության օրն էր Սոթքում, որտեղ նա նկարահանել էր ընտրատեղամասում հարյուրավոր զինծառայողների կուտակումը քվեարկության ավարտից րոպեներ առաջ, ինչպես նաեւ զինծառայողների հետ ընտրատեղամաս մտած քաղաքացիական հագուստով անձանց, ովքեր չունեին որեւէ կարգավիճակ, որը նրանց թույլ կտար այդ պահին գտնվել ընտրատեղամասում: Լրագրողի հարցադրումներին, թե ինչու են կողմնակի անձինք ընտրատեղամասում նախագահը պատճառաբանել, թե միջանցքը ընտրատեղամասի տարածքը չէ. զինվորների քվեարկության ողջ ընթացքում քաղաքացիական հագուստով անձը շարունակել են մնալ ընտրատեղամասի տարածքում:

---

[47] https://news.am/hy/news/733114

[48] https://iravaban.net/543277.html

[49] https://odihr.osce.org/sites/default/files/documents/official_documents/2026/06/ARM%20Parliamentary%202026_PS_08.06.2026.pdf

[50] https://www.aravot.am/2026/06/09/1562548/?fbclid=IwY2xjawSXtshleHRuA2FlbQIxMQBzcnRjBmFwcF9pZBAyMjIwMzkxNzg4MjAwODkyAAEeDsjv6LeoAhE4o-geLbFu2B7h_BC3SPRBeJMbXKj7ZnFzUtTKceDXvlDG1Sk_aem_f04E-kBMTx9dM7iMwEptUg

Իր տեսանյութի հրապարակումից կարճ ժամանակ անց NEWS.am–ը հեռախոսազանգ ստացավ Պաշտպանության նախարարությունից, որի ժամանակ հնչել է բողոք առ այն, որ Սոթքի ընտրատեղամասից սպա է զանգահարել ու բողոքել, որ իբր NEWS.am–ի լրագրողը «խոչընդոտում է հանձնաժողովի նախագահի աշխատանքը»:

Հունիսի 5-ին՝ Ազգային ժողովի ընտրություններից երկու օր առաջ, իրավապահ մարմինները (ԱԱԾ և Քննչական կոմիտե) խուզարկություն իրականացրեցին «Ուժեղ Հայաստան» դաշինքի հետ փոխկապակցված «Արմատ Մեդիա»[51] (Armat Media) լրատվական գործակալության գրասենյակում: Առգրավվեցին լրագրողների հեռախոսներն ու համակարգիչները, խաթարվեց ուղիղ եթերը, և խմբագրության դռները կապարակնքվեցին: Քննչական կոմիտեի պնդմամբ՝ խուզարկությունները կատարվել են իբրև թե «առանձնապես խոշոր չափերի փողերի լվացման» և նյութապես շահագրգռելու վերաբերյալ քրեական վարույթի շրջանակում: Այս գործով անցնում էր լրատվամիջոցի սեփականատեր, «Ուժեղ Հայաստան»-ի առանցքային անդամ Ալիկ Ալեքսանյանը, ով կալանավորվել էր միջադեպից օրեր առաջ՝ հունիսի 3-ին:

2025թ. լրատվամիջոցների գործունեության պայմանների շուրջ մտահոգություններ առաջացրեց նաև «Առավոտ» օրաթերթի խմբագրության շուրջ ստեղծված իրավիճակը: Ավելի քան երեք տասնամյակ Մամուլի շենքում գործունեություն ծավալած խմբագրությանը Պետական գույքի կառավարման կոմիտեն ծանուցեց ազատել զբաղեցրած տարածքը՝ հրաժարվելով երկարաձգել պայմանագիրը[52]: «Առավոտի» ղեկավարությունը հայտարարեց, որ որոշումն ունի ընտրողական բնույթ և հանգեցնում է անկախ խմբագրության գործունեության պայմանների վատթարացման: Թեև իշխանությունները պատճառաբանեցին որոշումը պայմանագրային հարաբերությունների ավարտով, մամուլի ներկայացուցիչների և մի շարք փորձագետների գնահատմամբ՝ դեպքը լրացուցիչ ճնշում էր անկախ կամ իշխանություններին քննադատող լրատվամիջոցների նկատմամբ: («31 տարվա ներկայությունից հետո «Առավոտ»-ը ստիպված է հեռանալ Մամուլի շենքից»)

2026թ. մայիսի 31-ին լրագրող և հանրային գործիչ Նաիրի Հոխիկյանը հայտարարեց, որ իր տան վրա հարձակում է իրականացվել[53], իրեն հարվածներ են հասցվել և փորձ է կատարվել ներխուժել բնակարան: Դեպքից հետո նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ հունիսի 2-ին իրավապահ մարմինները խուզարկություն են իրականացրել նրա բնակարանում: Դեպքը լայն արձագանք է ստացել մամուլում և ներկայացվել որպես նախընտրական շրջանում ընդդիմադիր հայացքներ ունեցող հանրային գործչի նկատմամբ ճնշման դրսևորում: (168.am — «Խուզարկություն է իրականացվում լրագրող Նաիրի Հոխիկյանի տանը»)

ԵՊՀ պրոֆեսոր Անուշ Սեդրակյանը[54] հունիսի 10-ին լրատվամիջոցներին հայտնել[55] էր, որ իշխանությունները պատրաստվում են լուծարել իր ղեկավարած՝ Արտասահմանյան գրականության ամբիոնը, որի ղեկավարն է նա, չնայած այն

[51] https://hetq.am/hy/article/181820
[52] https://civilnet.am/hy/news/966797
[53] https://168.am/2026/06/02/2423858.html?utm_source=chatgpt.com
[54] https://www.aravot.am/2026/06/11/1563058/

[55] https://hraparak.am/am/post/957193d66f780d7f7d0363701a276bde

հանգամանքին, որ այն մայր բուհի ամենահին ու կարեւոր ամբիոններից է: Պատճառներից մեկն այն է, որ Սեդրակյանը մասնակցել է ընտրություններին՝ «Միասնության թեւեր» կուսակցության ցուցակով: Անուշ Սեդրակյանի դեպքը ակադեմիական ազատության սահմանափակման միակ դրսևորումը չէ: Ամիսներ առաջ աշխատանքից ազատել են ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկան Գևորգ Բարսեղյանին[56]՝ ընդդիմադիր քաղաքական հայացքների պատճառով: Ակնհայտորեն քաղաքական դրդապատճառներով են աշխատանքից ազատվել նաև ԵՊՀ դասախոսներ Աբրահամ Գասպարյանը[57] եւ Մենուա Սողոմոնյանը[58]: Իշխանության հասցեին սուր քննադատություն հնչեցնելու և «Սրբազան Պայքար» շարժմանը սատարելու պատճառով Աբրահամ Գասպարյանը[59] նաև ծեծի[60] է ենթարկվել: Քաղաքական հաշվեհարդարը շարունակվում է նաև ընտրություններից հետո: Հունիսի 11-ին ձերբակալվել է ընդդիմադիր քաղաքագետ Ալեն Ղևոնդյանը, ով համակրում է «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը՝ ֆեյսբուքում ստատուս գրելու համար[61]: Ալեն Ղևոնդյանի և ընդդիմադիր «Հայաստանի Հանրապետական կուսակցության» անդամ Տիգրան Վարդանյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասով (տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով իշխանությունը զավթելուն և սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերի համար): Տիգրան Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը[62]:

Ազատ խոսքի սահմանափակման դրսևորումներից են նաև «Իմնեմնիմի» փոդքասթի համահեղինակներ Նարեկ Սամսոնյանի և Վազգեն Սաղաթելյանի նկատմամբ իրականացված քրեական հետապնդումը[63]: Նրանք ձերբակալվել են 2024 թ. մարտի 22-ին և մեղադրվել տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ, մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելու մեջ (ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մաս): Նրանց բնակարաններում իրականացվել են խուզարկություններ, իսկ հետագայում նրանց նկատմամբ կիրառվել է կալանք: Փաստաբանները և մի շարք հասարակական գործիչներ հայտարարել են, որ քրեական հետապնդման իրական պատճառը «Իմնեմնիմի» հաղորդման ընթացքում հնչեցված իշխանությունների հասցեին սուր քննադատությունն ու ծաղրական բնույթի արտահայտություններն էին, մինչդեռ լրագրողները չեն ընդունել իրենց առաջադրված մեղադրանքները՝ դրանք գնահատելով որպես քաղաքական շարժառիթներով պայմանավորված հետապնդում և խոսքի ազատության սահմանափակում:

---

56 https://hraparak.am/am/post/b49efe027df4df15dc296368f97b72f2?fbclid=IwY2xjawSX8kxleHRuA2FlbQIxMABicmlkETFJbG1xS2RiTXltZUV5NDdlc3J0YwZhcHBfaWQQMjIyMDM5MTc4ODIwMDg5MgABHhF_DJHLbhjHjI8K1LBp84yGIo397dtk8FUiglK1d2M80x23bt1PPoZ27fsz_aem_uccymc8TNVde8Q7B17ly9Q

57 https://factor.am/805792.html

58 https://news.am/hy/news/840519

59 https://www.youtube.com/watch?v=5oe2OzHFFJw

60 https://www.youtube.com/watch?v=5oe2OzHFFJw

61 https://hraparak.am/am/post/66c6b5d7a628e8b315f35438666bef4e

62 https://hraparak.am/am/post/21f2183e5302ef33bfb028bc136202b9

63 https://civilnet.am/hy/news/768925

Մեդիա դաշտում վերջին տարիներին տեղի ունեցած փոփոխությունները նշանակալի ազդեցություն են ունեցել 2026 թ. խորհրդարանական ընտրությունների տեղեկատվական միջավայրի վրա: Ընդդիմության հետ ասոցացվող H2 և «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունների՝ համապետական վերգետնյա հեռարձակման լիցենզիաների կորուստը, ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցու հետ կապվող «Շողակաթ» հեռուստաընկերության փակումը հանգեցրել են հեռարձակվող մեդիայի բազմակարծության նվազմանը: Արդյունքում ընտրողների մի մասը զրկվել է այլընտրանքային քաղաքական և արժեքային դիրքորոշումներ ներկայացնող հեռուստաալիքների հասանելիությունից հենց այն ժամանակահատվածում, երբ հանրությունը պետք է հնարավորություն ունենար տեղեկացված ընտրություն կատարել: Հատկանշական է, որ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ/ODIHR) իր 2026 թ. միջանկյալ զեկույցում արձանագրել է հեռարձակվող մեդիայի բազմակարծության նեղացման վերաբերյալ մտահոգությունները՝ դրանք դիտարկելով ընտրական գործընթացի համատեքստում:

(5) Բռնաճնշումներ քաղաքացիների նկատմամբ, իշխանության կողմից ատելության մթնոլորտի ձևավորում, հիբրիդային պատերազմ, վհուկների որս

2026թ. խորհրդարանական ընտրություններին նախորդած շրջանում քաղաքական անհանդուրժողականության դրսևորումները դուրս եկան քաղաքական գործիչների և կազմակերպված ընդդիմության շրջանակներից՝ տարածվելով նաև շարքային քաղաքացիների, պատերազմից տուժած ընտանիքների անդամների, բլոգերների և իշխանություններին քննադատող անհատների նկատմամբ: Իշխանությունների ներկայացուցիչների կողմից սուր, հաճախ բարեկրթության սահմանները հատող քննադատական խոսքը, անհամաձայնությունը, ընդդիմության ներկայացուցիչներին պիտակավորող, զրպարտչական բնույթի մեղադրական ճառերը, կծող հեգնական արտահայտությունները հաճախ արժանանում էին ոչ միայն կոշտ հրապարակային արձագանքի, այլև վերափոխվում էին իրավապահ մարմինների միջամտության, վարչական կամ քրեական բնույթի սահմանափակումների: Միաժամանակ իշխանության բարձրագույն ներկայացուցիչների կողմից կիրառվող ագրեսիվ և նվաստացուցիչ բառապաշարը նպաստեց հասարակության առանձին խմբերի՝ հատկապես արցախցիների, ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքացիների և իշխանության քննադատների դեմ ուղղված թշնամական վերաբերմունքի խորացմանը, նրանց հասցեին հնչող սպառնալիքների: Նման հռետորաբանությունն ու գործելակերպը ակնհայտորեն ունեցել են մի կողմից ատելության խոսքի տարածման բնույթ, ինչի մասին են վկայում քաղաքացիրների և բազմաթիվ ֆեյք օգտահաշիվների միջոցով վերբալ հարձակումները: Մյուս կողմից դրանք կարող էին ունենալ վախի տարածման և «սառեցնող ազդեցություն»՝ զսպելով քաղաքացիների ազատ արտահայտվելու, քաղաքական գործընթացներին մասնակցելու և իշխանություններին հաշվետու պահելու պատրաստակամությունը:

Պատերազմից հետո աճող ատելության մթնոլորտը և բռնաճնշումների ալիքը հատկապես նոր թափ ու բնույթ ստացավ 2026թ. հունիսի 7-ի ԱԺ ընտրություններին ընդառաջ:

Նախընտրական շրջանում Կառավարության ղեկավարը սկսեց անզուսպ հարձակումներ գործել անհնազանդ քաղաքացիների վրա: Մասնավորապես նրա թիրախում հայտնվեց երիտասարդ մայր, Արցախյան առաջին պատերազմում զոհված ազատամարտիկ Մերուժան Մոսիյանի[64] Արմինե Մոսիյանը[65], ով հրաժարվեց Փաշինյանի ձեռքից վերցնել քարտեզ-բրոշը, որտեղ չկար Արցախը: Սա Փաշինյանին գցեց անհավասարակշռության մեջ՝ մեղադրանքների տարափ հեղելով երիտասարդ կնոջ և նրա վախից կուչ եկած երեխայի վրա: Այդ խիստ աբյուզիվ խոսքի ժամանակ նա արցախցիներին կոչեց «փախածներ»:

Մեկ այլ դեպքում՝ մայիսի 18–ին, Արաբկիրում քարոզարշավի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանիը վերբալ հարձակում գործեց սուր հարցադրումներ տվող կնոջը՝ մանկաբարձ-գինեկոլոգ Արփինե[66] Սողոյանի[67] վրա՝ կարծելով, թե նա արցախցի է, և թևից քաշեց, երբ կինը վրդովված փորձում էր հեռանալ: Փաշինյանին հունից հանել են բժշկուհու կողմից հնչեցրած հարցադրումները, ինչի արդյունքում նա սկսեց սպառնալ՝ օգտագործելով անթույլատրելի բառապաշար՝ «եթե դուք Ռոբն եք, ուրեմն» «կզացնելու եմ», «սատկացնելու եմ», «չոքացնելու եմ»:Սողոյանի եղբայրը արցախյան 44-օրյա պատերազմում անհետ կորած է ճանաչվել, և նա փորձում էր հիշեցնել Փաշինյանին անհետ կորածների հարցը: Կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ Սողոյանի հաստատությունից պարտադրել են նրան աշխատանքից ազատման դիմում գրել:

2026թ. մայիսի 18-ին, նախընտրական քարոզարշավի ընթացքում վարչապետ Նիկոլ Փաշինյանին արցախցիների իրավունքների և պատերազմի զոհերի թեմայով սուր հարցեր ուղղելուց հետո, ձերբակալվեց արցախցի քաղաքական գործիչ, «Արցախի հեղափոխական կուսակցության» նախագահ Արթուր Օսիպյանը[68]: Նույն օրը վարչապետը հրապարակայնորեն նրան հասցեագրեց վիրավորական արտահայտություններ, այդ թվում՝ «Դու խի՞ ես կենդանի, որ մի հատ էլ հինգ հազար զոհի մասին ես խոսում», «դու ինչու՞ չես մեռել», «դուք ինչի՞ չեք մեռել»: Սրան հաջորդեց Օսիպյանի կալանավորումը երկու ամսով[69]: Ըստ նրա փաստաբանի, ձերբակալման պահից նա հացադուլ հայտարարեց՝ պահանջելով վարչապետի հրապարակային ներողությունը: 2026թ. հունիսի 9-ին, նրա հացադուլի 22-րդ օրը, վերջինիս առողջական վիճ անքից ազատ արձակեցին: Այս դեպքը լայն արձագանք ստացավ, ներարյալ քաղաքացիների տևողական նստացույց և հավաքներ ՝ որպես նախընտրական շրջանում իշխանությունների հասցեին քննադատական խոսք հնչեցրած քաղաքացու նկատմամբ անհամաչափ արձագանքի և քաղաքական անհանդուրժողականության դրսևորում: Հունիսի 10-ին Ա.Օսիպյանի խափանման միջոցը փոխեցին տնային կալանքի, մի շարք քաղաքացիական կազմակերպությունների և անձանց երաշխավորությամբ, սակայն քրեական հետապնդումը շարունակվում է:

«Համահայկական ճակատ» կուսակցության անդամ Միքայել Մարգարյանը ենթարկվել է քաղաքական և քրեական հետապնդման այն բանից հետո երբ պահանջել է

---

[64] https://www.youtube.com/watch?v=pqMkOmevvSw
[65] https://www.youtube.com/watch?v=K4lFcBs_jhA
[66] https://www.youtube.com/watch?v=iL_wf-ka4cs
[67] https://news.am/hy/news/1036283
[68] https://civilnet.am/hy/news/1011991
[69] https://www.azatutyun.am/amp/shat-hyoutsvats-vichakoum-e-artour-%D6%85sipyann-arden-22-rd-%D6%85ry-hatsadouli-mej-e/33776854.html

հանրայնացնել 2020թ. 44 -օրյա պատերազմի ԱԺ հետաքննության արդյունքները: Մարգարյանը 2026թ. մարտի 26-ին փորձ էր արել խորհրդարանի հարևանությամբ հանդիպել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին, արժանանալով վերջինիս կողմից անհարգալից, քամահրական վերաբերմունքի, վեճի էր բռնվել նրա հետ, որի ընթացքում հնչել էին փոխադարձ հայհոյանքներ[70]:

Նախընտրական շրջանում արձանագրվել է մահվան ելքով մտահոգիչ դեպք, որը լայն հանրային արձագանք է ստացել: Նշավան համայնքի բնակիչ, 53-ամյա Արմեն Հովհաննիսյանը[71] 2026թ. մայիսի 14-ին բերման էր ենթարկվել՝ իշխող քաղաքական ուժի նախընտրական պաստառը պատռելու կասկածանքով: Հովհաննիսյանը երկու օր պահվել է Ոստիկանության Արտաշատի բաժնում, ապա մայիսի 16-ին տեղափոխվել հոգեբուժական հաստատություն, որտեղ նույն օրը, պաշտոնական վարկածի համաձայն, ինքնասպանություն է գործել: Ըստ մամուլի հրապարակումների՝ Արմեն Հովհաննիսյանը նախկինում հաշվառված է եղել հոգեբուժական ծառայություններում: Դեպքի հանգամանքները, հատկապես՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ կիրառված միջոցների համաչափությունը, ոստիկանությունում նրա պահման պայմանները և հոգեբուժարան տեղափոխվելուց անմիջապես հետո արձանագրված մահվան պատճառները, հանրության շրջանում առաջացրել են լուրջ հարցեր և հանրային պահանջ՝ անկախ ու արդյունավետ քննություն իրականացնելու վերաբերյալ: Դեպքը քննադատների կողմից դիտարկվում է որպես նախընտրական շրջանում քաղաքական անհանդուրժողականության մթնոլորտի առավել ողբերգական դրսևորումներից մեկը:

Հունիսի 7-ին ձերբակալվել է ՌԴ-ից ժամանած քաղաքացի Հովհաննես Սահակյանը, ով կատակով լրագրողի տված հարցին պատասխանել է, որ եկել է մի քանի ժամով՝ քվերակելու և ետ վերադառանալու, «քանի դեռ իրավիճակը չի խառնվել»: Քաղաքացուն այնուհետև ազատ են արձակել՝ կիրառելով երկրից չբացակայելու խափանման միջոց: Բազմաթիվ են վկայություններն առ այն, որ ՌԴ-ից ժամանող քաղաքացիներին տրվել է 25-օրյա զինվարակ հավաքի վերաբերյալ ծանուցում, ինչը ևս ակնհայտ քաղաքական բռնաճնշման դրսևորում է:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանին տեսանյութում «դավաճան» անվանելուց հետո մայիսի 12-ին կալանավորվեց բլոգեր Արտակ Ավետիսյանը, ով ազատ արձակվեց միայն հունիսի 10-ին[72]:

2026թ. հունիսի 7-ին, ընտրությունների օրը, Գեղարքունիքի մարզի Լիճք համայնքում ծեծի է ենթարկվել[73] լրագրող Նաիրի Հոխիկյանի եղբայրը՝ Լևոն Հոխիկյանը, որը, ըստ հրապարակումների, հանդես էր գալիս որպես ընդդիմադիր ուժի վստահված անձ: Ըստ մամուլի հրապարակումների՝ միջադեպը տեղի է ունեցել ընտրախախտումների վերաբերյալ դիտողություններից հետո: (ՔՊ-ականների կողմից ծեծի է ենթարկվել Նաիրի Հոխիկյանի եղբայրը)

---

[70] https://www.azatutyun.am/a/hayhoyanknerov-mijadep-alen-simonyani-masnaktsoutyamb-erkou-andz-berman-e-entarkvel/33717307.html

[71] https://www.panorama.am/am/news/2026/05/19/%D4%B1%D6%80%D5%B4%D5%A5%D5%B6-%D5%80%D5%B8%D5%BE%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B6%D5%AB%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/3159478

[72] Փաշինյանին «դավաճան» անվանած բլոգերն ազատվել է բանտային կալանքից. փաստաբան – armeniatoday.am

[73] https://newspress.am/?l=am&p=272942&utm_source=chatgpt.com

2026 թվականի հունիսի սկզբին Արթիկում հրապարակվեց տեղեկություն այն մասին, որ Ռոբերտ Քոչարյանի աջակից Հակոբ Հարությունյանը ծեծի է ենթարկվել[74] համայնքապետարանի շենքի դիմաց: Մամուլի հրապարակումների համաձայն՝ միջադեպում ներգրավված են եղել իշխող կուսակցության հետ կապվող անձինք: «Հրապարակ» (Ծեծողը ծեծվողից ներողություն է խնդրել. «Հրապարակ»)

Ըստ պատգամավոր Գեղամ Մանուկյանի[75]՝ նախընտրական շրջանում արտերկրից Հայաստան ժամանած բազմաթիվ քաղաքացիների հանձնվել են 25-օրյա վարժական հավաքների ծանուցագրեր, ինչի հետևանքով նրանց փաստացի արգելվել է լքել երկիրը: Նրա ներկայացմամբ՝ նման միջոցները կիրառվել են նաև հոգևորականների, տարեց քաղաքացիների և իշխանություններին քննադատող անձանց նկատմամբ՝ առաջացնելով մտահոգություններ, որ վարժական հավաքների ինստիտուտը կարող էր օգտագործվել որպես քաղաքական ճնշման և ազատ տեղաշարժի սահմանափակման գործիք:

«Պատիվ ունեմ» դաշինքի ներկայացուցիչ Արմեն Աշոտյանը դեռևս 2023 թվականից գտնվում էր քրեական հետապնդման ներքո և երկար ժամանակ անցկացրել էր կալանքի մեջ: Ընդդիմադիր շրջանակները նրա նկատմամբ իրականացվող վարույթը գնահատել են որպես քաղաքական դրդապատճառներով պայմանավորված հետապնդում՝ այն կապելով իշխանությունների հասցեին նրա հետևողական քննադատության հետ: 2026 թվականի հունիսի 5-ին՝ Ազգային ժողովի ընտրություններից ընդամենը երկու օր առաջ, Աշոտյանը կրկին ձերբակալվեց պաշտոնական լիազորությունների չարաշահման և փողերի լվացման գործի շրջանակում[76]: Ըստ ՀՀԿ ներկայացուցիչ Էդուարդ Ծարմազանովի՝ ձերբակալությանը նախորդող գիշերը նրանք միասին ուղիղ եթերում քննարկում էին նախընտրական գործընթացներն ու սպասվող ընտրությունները: Ընդդիմադիրները ձերբակալության ժամանակահատվածը և դրա համընկնումը ընտրական գործընթացի հետ գնահատում են որպես քաղաքական ճնշման հերթական դրսևորում: (Ձերբակալվել է Արմեն Աշոտյանը, 168 ժամ)

Քաղաքական խոսքի անհամաչափ և անազնիվ դրսևորում էր նաև քաղաքական հակառակորդներին որպես «պատերազմ բերող կուսակցություններ», օտար երկրների գործակալներ ներկայացնելը թե՛ սեփական կուսակցության քաղաքական գովազդներում և թե՛ հանրային խոսքում՝ պիտակավորելով վերջիններիս որպես «պատերազմի եռագլուխ հրեշ»՝ ներկայացնելով սա նաև տեսողական պատկերով և փորձելով նաև նրանց կապել միմյանց հետ: Այս խոսույթը շարունակաբար կրկնվում էր իշխանության տարբեր ներկայացուցիչների կողմից՝ հանրության շրջանում փորձելով ստեղծել պատրանք, որ խաղաղությունը հնարավոր կլինի միայն Քաղաքացիական պայմանագրի իշխանության վերահաստատման և մանավանդ սահմանադրական մեծամասնությունը ստանալու դեպքում: Իշխող կուսակցությունը բացահայտ և ուղիղ տեքստով սպառնացել է Ադրբեջանի կողմից սեպտեմբեր ամսին սանձարձերծվելիք պատերազմով այն դեպքում, եթե ընտրությունների արդյունքում վերջինս սահմանադրական մեծամասնությունը չստանա: Սա ակնհայտորեն առաջացրել է հույզեր հանրության շրջանում, ինչը

---

74 https://www.slaq.am/news/%D0%A1%D0%B5%D0%BC%D0%B7%D0%BC%D0%BE%D0%BB%D0%B8?utm_source=chatgpt.com

75 https://armeniatoday.am/hy/armed-forces/1086729/

76 https://168.am/2026/06/05/2425411.html?utm_source=chatgpt.com

դրսևորվում էր իշխանության հասցեին քննադատություն հնչեցնող անհատների սոցիալական էջերում և մամուլի հրապարակումների ներքո թողնվող սուր քննադատության ու ատելության խոսքի տեղատարափով:

Աննախադեպ երևույթ էր նաև այն, որ իշխող քաղաքական կուսակցության կողմից փորձ էր արվում հանրության շրջանում առաջացնել վախ հիբրիդային պատերազմից, որն իբր ծավալվել է թշնամի պետության կողմից՝ ակնարկելով Ռուսաստանը՝ միևնույն ժամանակ դրան դիմակայելու համար օժանդակություն խնդրելով այլ օտար ուժերից՝ Եվրոպական Միությունից[77], որի համար նրանք ստացան 12 միլիոն օժանդակություն:

Չնայած այն հանգամանքին, որ սույն զեկույցի շրջանակներում նպատակ չունենք մանրամասն անդրադառնալ կամ չափել, թե որ կողմը որքան միջոցներ է ներդրել տեղեկատվական արշավ իրականացնելու համար, սակայն կնշենք հատկապես 3-ը, որն ակնհայտորեն օգտագործում էին պրո-իշխանական շրջանակները.

1. Սոցիալական ցանցերում իրենց օրակարգին ոչ ձեռնտու այլակարծությունը խեղդելու նպատակով ֆեյք օգտահաշիվներից, հիմնականում լատինատառ հայերեն տեքստերով հայհոյանքներով առատ բազմաթիվ հարձակումներ, ահաբեկում, որոնց նպատակն է ակնհայտորեն խեղդել արտահայտվող քաղաքացու կարծքին ու նրան ետ պահել նման հետագայում նորից գրառումներ կամ տեսանյութեր հրապարակելուց[78]:

2. Միևնույն կեղծ օրակարգերն[79] առաջ տանելու ու առանձին անհատների անունը սևացնելուն ուղղված իշխանական ուժի ներկայացուցիչների կողմից դրանց անընդհատ թմբակահարում:

3. Բազմաթիվ նորահայտ անհասկանալի մեդիա հարթակներ, բլոգերներ և սոցիական հարթակներում ստեղծված էջեր, որոնցով առաջ են մղվում պրո-իշխանական թեզերը:

Ներկայացված դեպքերը, թեև տարբեր են իրենց փաստական հանգամանքներով, միասին վկայում են նախընտրական շրջանում ձևավորված անհանդուրժողական և բևեռացնող միջավայրի մասին, որտեղ իշխանությունների հասցեին քննադատությունը կամ այլակարծությունը հաճախ ներկայացվում են որպես թշնամանք, դավաճանություն կամ վտանգ պետականության համար: Քաղաքացիների նկատմամբ անհամաչափ արձագանքները, հանրային պիտակավորումը, վիրավորական հռետորաբանությունը և իրավական մեխանիզմների ընտրովի կիրառման վերաբերյալ բարձրացված մտահոգությունները կարող էին բացասաբար ազդել ընտրողների ազատ կամարտահայտման, քաղաքական մասնակցության և ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վրա: Այս հանգամանքները պահանջում են անկախ գնահատում և արդյունավետ քննություն՝ մարդու իրավունքների և ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշների պահպանման տեսանկյունից:

---

[77] Մեզ մնում է գտնել ռուսական ապատեղեկատվությունը՝ https://www.azatutyun.am/a/evramioutyouny-hayastanin-12-mln-evroyi-ajaktsoutyoun-kta-ayd-tvoum-rousakan-apateghekatvoutyan-dem-paykari-hamar/33610696.html

[78] Ուշադրություն դարձրեք գրառուումներին և թե ովքեր են դրանք անում՝ հիմնականում կեղծ, դատարկ օգտահաշիվներ են: https://www.facebook.com/reel/1952506942070158

[79] Իշխանական պատգամավոր Վահագն Ալեքսանյանը հաստատում է, որ Հայաստան ընտրությանը մասնակցելու նպատակով ժամանած քաղաքացիներին 25-օրյա զորավարժություններին մասնակցելու ծանուցագրեր են ներկայացրել: https://www.facebook.com/reel/3059065947631802

(6) Ունեզրկման սպառնալիքներ, դեմոնիզացիա և վիուկների որս

Նախընտրական շրջանում իշխանության բարձրագույն ներկայացուցիչների հռետորաբանության մեջ առանձնահատուկ տեղ զբաղեցրին տնտեսական և քաղաքական ազդեցություն ունեցող ընդդիմադիր գործիչների նկատմամբ ուղղված հայտարարությունները, որոնք ներառում էին նրանց հանրային պիտակավորում, քրեական բնույթի մեղադրանքների հրապարակային հնչեցում՝ առանց դատարանի համապատասխան վճիռների, ինչպես նաև գույքային հետևանքների մասին ակնարկներ: Նման հայտարարությունները վերաբերում էին մասնավորապես գործարարներ և քաղաքական գործիչներ Սամվել Կարապետյանին, Գագիկ Ծառուկյանին և ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Հաշվի առնելով վերջիններիս հանրային ճանաչվածությունն ու քաղաքական ազդեցությունը՝ այդ հայտարարությունները բազմաթիվ դիտորդների կողմից գնահատվել են ոչ միայն որպես քաղաքական պայքարի գործիք, այլև որպես պոտենցիալ հակառակորդների նկատմամբ վախի և ինքնագրաքննության մթնոլորտ ձևավորելու փորձ:

Սամվել Կարապետյանի՝ քաղաքական գործընթացներին ներգրավվելու և ընդդիմադիր նախաձեռնություններին աջակցելու մասին հայտարարություններից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանը մի շարք հրապարակային ելույթներում կոշտ քննադատության է ենթարկել նրան՝ օգտագործելով նվաստացնող բառապաշար և հայտարարելով, որ պատրաստ է նրան «բոմժ[80]» սարքել: Քաղաքական գնահատականներից զատ, Կարապետյանի նկատմամբ սկսվել են քրեական հետապնդումներ, իսկ պետությունը նախաձեռնել է նրան պատկանող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության նկատմամբ վերահսկողության փոփոխության գործընթաց, ինչը վերջինիս պաշտպանների կողմից գնահատվել է որպես քաղաքական դրդապատճառներով պայմանավորված ունեզրկման փորձ:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում վարչապետ Փաշինյանը թիրախավորել է նաև «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ[81] Ծառուկյանին՝ նրան հրապարակայնորեն կապելով փողերի լվացման և կոռուպցիոն սխեմաների հետ, ինչպես նաև ակնարկելով, որ կարող է պետության վերահսկողության տակ վերցվել նրան պատկանող ցեմենտի արտադրության ձեռնարկությունը: Ի պատասխան՝ Ծառուկյանը հայտարարել է, որ տարիներ շարունակ հարյուրավոր միլիոն դոլարների ներդրումներ է իրականացրել Հայաստանում, այդ թվում՝ Երևանի Օլիմպավանում, սպորտային և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման նպատակով, և պնդել, որ իր նկատմամբ հնչող մեղադրանքները քաղաքական բնույթ ունեն: Գագիկ Ծառուկյանի դեմ հունիսի 9-ին հարուցվել է քրեական հետապնդում առանձնապես խոշոր չափերով հարկերից խուսափելու համար: Ըստ օրենքի՝ ընտրությունների ժամանակ թեկնածուի դեմ քրեական հետապնդում հարուցելու համար անհրաժեշտ է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը: Թեկնածուն նաև չի կարող զրկվել ազատությունից, եթե չկա ԿԸՀ-ի համաձայնությունը, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանքի պահին կամ անմիջապես դրանից հետո: Ըստ Ծարուկյանի իրավաբանի՝

[80] https://www.youtube.com/shorts/V_cTOaCy_fc
[81] https://www.youtube.com/shorts/2zMKsWYNMm8

վերջինս ԿԸՀ-ից քրեական հետապնդման մասին ծանուցում չի ստացել: Ծարուկյանի դեմ խափանման միջոց է ընտրվել երկրից չբացակայելը[82]:

Նույն ժամանակահատվածում վարչապետը շարունակել է նաև ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հասցեին հնչեցնել ծանր մեղադրանքներ՝ նրան կապելով 1999 թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության, 2008 թ. մարտի 1-ի իրադարձությունների և երկրում համակարգային կոռուպցիայի հետ՝ չնայած նշված դրվագների վերաբերյալ նրա մեղավորությունը հաստատող դատական ակտերի բացակայությանը: Ընդդիմության ներկայացուցիչների գնահատմամբ՝ նման հռետորաբանությունը նպաստել է քաղաքական հակառակորդների դեմոնիզացիային և հասարակության մեջ «ժողովրդի թշնամիների» մասին պատկերացումների ամրապնդմանը:

Տնտեսական ռեսուրսների կորստի, քրեական հետապնդման և հանրային պիտակավորման մասին բարձր մակարդակով հնչող հայտարարությունները կարող էին ընկալվել որպես ազդակ ոչ միայն տվյալ անձանց, այլև քաղաքական և տնտեսական այլ դերակատարների համար՝ սահմանափակելով նրանց պատրաստակամությունը մասնակցելու քաղաքական գործընթացներին, ֆինանսավորելու ընդդիմադիր նախաձեռնություններ կամ հրապարակայնորեն արտահայտելու իշխանություններից տարբերվող դիրքորոշումներ: Մյուս կողմից, իշխանության ներկայացուցիչների կողմից հնչող ուղիղ բռնության կոչերի ֆոնին, սրանք նպաստում են և/կամ խորացնում լայն հանրության ատելությունը մեծահարուստների նկատմամբ, ձևավորում անվստահության և սուր անհանդուրժողականության մթնոլորտ:

(7) Եկեղեցու դեմ ճնշումները քաղաքական համատեքստում

Հայաստանի Հանրապետությունում Հայ Առաքելական Եկեղեցին շարունակում է մնալ հանրային բարձր վստահություն և հեղինակություն վայելող ազգային ինստիտուտներից մեկը՝ նշանակալի ազդեցություն ունենալով հասարակական կարծիքի ձևավորման վրա: Այդ պատճառով 2026թ. խորհրդարանական ընտրություններին նախորդած ժամանակահատվածում եկեղեցու և նրա բարձրաստիճան ներկայացուցիչների նկատմամբ իրականացված համակարգային տեղեկատվական, քաղաքական և քրեաիրավական ճնշումները չեն կարող դիտարկվել բացառապես պետություն–եկեղեցի հարաբերությունների համատեքստում: Դրանք տեղի են ունեցել խորացող քաղաքական բևեռացման և ընտրական մրցակցության պայմաններում՝ ազդելով հանրային դիսկուրսի վրա և նպաստելով իշխանության քննադատական ձայների հեղինակազրկմանը:

Եկեղեցու նկատմամբ ճնշումներն առավել տեսանելի դարձան այն բանից հետո, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի նախաձեռնությամբ 2025թ. մայիսի 26–28-ը Շվեյցարիայի Բեռն քաղաքում անցկացվեց միջազգային համաժողով՝ նվիրված Արցախի հայկական կրոնական, մշակութային և պատմական ժառանգության պահպանության հարցերին: Համաժողովը կազմակերպվել էր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և Շվեյցարիայի բողոքական եկեղեցու աջակցությամբ և միջազգային հանրության ուշադրությունն էր հրավիրում արցախահայության բռնի տեղահանության, մշակութային

[82] https://www.azatutyun.am/a/datakhazoutyoun-gagik-tsaroukyani-nkatmamb-kreakan-hetapndoum-e-haroutsvel/33776762.html

ժառանգության ոչնչացման և կրոնական ազատությունների խնդիրներին: Դրան հաջորդեցին Ադրբեջանի Կովկասի մահմեդականների վարչության ղեկավար Ալլահշուքյուր Փաշազադեի հայտարարությունները, որոնցում Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացվում էր որպես տարածաշրջանային կայունությանը սպառնացող կառույց: Հայ Առաքելական Եկեղեցին այդ հայտարարությունները գնահատեց որպես ադրբեջանական քարոզչության և ատելության խոսքի դրսևորում:

Նույն ժամանակահատվածում Հայաստանի իշխանությունների ներկայացուցիչների կողմից եկեղեցու հասցեին հնչեցին աննախադեպ կոշտ և նվաստացուցիչ արտահայտություններ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրապարակայնորեն օգտագործեց «չուլանացված» ձևակերպումը՝ անդրադառնալով եկեղեցուն, իսկ իշխանամերձ տեղեկատվական հարթակներում և սոցիալական ցանցերում լայն տարածում ստացան Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդների անձնական կյանքին, բարոյական նկարագրին և հեղինակությանը վերաբերող չստուգված և զրպարտչական բնույթի հրապարակումներ: Միաժամանակ քրեական հետապնդման ենթարկվեցին եկեղեցու հետ կապվող կամ եկեղեցու պաշտպանությամբ հանդես եկած մի շարք անձինք, այդ թվում՝ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը և նրա գործով անցնող 17 քաղաքացիներ, Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը ՔԿ-ն մանրամասներ է հայտնում Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի վերաբերյալ քրեական վարույթի նախաքննությունից - ԱՐՄԵՆՊՐԵՍ Հայկական լրատվական գործակալություն[83] 28 հուլիսի, 2025 , ով այժմ գտնվում տնային կալանքի մեջ, ինչպես նաև անձեռնմխելիությունից զրկված մեկ պատգամավոր: Քրեական գործերի քաղաքական շարժառիթների վերաբերյալ մտահոգություններ են հայտնել նրանց պաշտպանները, իսկ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրանք գնահատել է որպես եկեղեցու դեմ ուղղված հետապնդման դրսևորումներ:

Հանրային բարձր վստահություն վայելող կրոնական ինստիտուտի և նրա առաջնորդների նկատմամբ իրականացված հեղինակազրկման արշավները, վիրավորական հռետորաբանությունը և քրեական հետապնդումները կարող էին ազդել ընտրական գործընթացի ընդհանուր միջավայրի վրա՝ սահմանափակելով հասարակական հեղինակություն ունեցող դերակատարների ազատ մասնակցությունը հանրային քննարկումներին և նվազեցնելով իշխանության գործողությունների նկատմամբ այլընտրանքային գնահատականների լսելիությունը: Նման զարգացումները մտահոգիչ են հատկապես այն պայմաններում, երբ ընտրական գործընթացի ժողովրդավարական բնույթը ենթադրում է բազմակարծության, հանրային վստահություն վայելող ինստիտուտների ինքնավարության և քննադատական կարծիքների ազատ արտահայտման երաշխավորում:

[83] https://armenpress.am/hy/article/1225862

(8) Տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ ճնշումներ և ընտրական մանդատի չեզոքացման փորձեր

Առանձին ուշադրության է արժանի նաև տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում արձանագրված միտումը, երբ ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչների ընտրական հաջողություններին հաջորդել են քրեական հետապնդումները, վարչական խոչընդոտները կամ ընտրված մանդատի լիարժեք իրացմանը խանգարող այլ գործողություններ: Վանաձորի, Գյումրու և Փարաքյարի դեպքերը հանրային լայն քննարկումների առարկա են դարձել որպես հնարավոր օրինակներ այն բանի, թե ինչպես կարող են իրավական և վարչական գործիքները կիրառվել ոչ միայն նախընտրական փուլում քաղաքական մրցակցությունը սահմանափակելու, այլև արդեն իսկ ընտրությունների միջոցով ձևավորված ժողովրդական կամքի իրացումը չեզոքացնելու նպատակով: Այս հանգամանքը կարևոր է նաև սույն զեկույցի համատեքստում, քանի որ ընտրական իրավունքի պաշտպանությունը վերաբերում է ոչ միայն քվեարկության ազատությանը, այլև ընտրության արդյունքի նկատմամբ հարգանքին և ընտրված ներկայացուցիչների կողմից ստացված ժողովրդավարական մանդատի արդյունավետ իրացման ապահովմանը:

Վանաձոր. ընտրական մանդատի իրացման խափանում

2021 թ. ՏԻՄ ընտրություններում «Մամիկոն Ասլանյան» դաշինքը հաղթանակ տարավ Վանաձորում և ընդդիմադիր ուժերի աջակցությամբ պատրաստվում էր ձևավորել համայնքային իշխանություն: Սակայն 2021թ. դեկտեմբերի 15-ին՝ ավագանու առաջին նիստից ընդամենը օրեր առաջ, Վանաձորի նախկին համայնքապետ և քաղաքապետի թեկնածու Մամիկոն Ասլանյանը ձերբակալվեց[84] պաշտոնեական լիազորությունների չարաշահման և կեղծիքի վերաբերյալ մեղադրանքներով: Արդյունքում դեկտեմբերի 24-ին նախատեսված ավագանու նիստը չկայացավ, իսկ համայնքը երկար ժամանակ մնաց առանց ընտրված ղեկավարի: Թեև իրավապահ մարմինները պնդում էին, որ գործն առնչություն չունի ընտրական գործընթացի հետ, ընդդիմադիր ուժերը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և մի շարք իրավաբաններ այս զարգացումները գնահատեցին որպես ընտրությունների արդյունքում ձևավորված քաղաքական մեծամասնության կամքի փաստացի չեզոքացում և ժողովրդավարական մանդատի իրացման խոչընդոտում: Նման գնահատական է հնչեցրել նաև ***Հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհուրդը***՝ արձանագրելով[85], որ համայնքի ընտրական գործընթացից անմիջապես հետո տեղի ունեցած իրադարձությունները կարող էին վտանգել տեղական ինքնակառավարման ժողովրդավարական սկզբունքների իրականացումը:

Գյումրի. ընդդիմադիր ուժի հաղթանակից հետո քաղաքական լարվածության խորացում

2025թ. ՏԻՄ ընտրություններից հետո Գյումրիում ընդդիմադիր ուժերի համագործակցության արդյունքում քաղաքապետ ընտրվեց Վարդան Ղուկասյանը՝ իշխող կուսակցության թեկնածուի պարտությունից հետո: Սակայն ընտրություններից ամիսներ

[84] https://hetq.am/hy/article/139107
[85] https://iravaban.net/364585.html

անց նրա նկատմամբ նախաձեռնվեցին մի շարք քրեական վարույթներ: 2025թ. հոկտեմբերին Հակակոռուպցիոն կոմիտեն ձերբակալեց քաղաքապետին[86] () և քաղաքապետարանի մի շարք աշխատակիցների՝ կաշառք ստանալու մեղադրանքով, իսկ հետագայում նրա նկատմամբ հարուցվեցին նաև այլ քրեական գործեր: Իրավապահ մարմինները հայտարարեցին, որ գործում առկա են բավարար ապացույցներ, մինչդեռ Ղուկասյանի պաշտպաններն ու աջակիցները գործընթացները բնութագրեցին որպես քաղաքական ենթատեքստ ունեցող հետապնդում՝ մատնանշելով դրանց ժամանակագրական կապը ընդդիմադիր ուժերի ընտրական հաջողության հետ: Ստեղծված իրավիճակը խորացրեց կենտրոնական և համայնքային իշխանությունների միջև առկա հակասությունները և հանրային քննարկման առարկա դարձրեց այն հարցը, թե որքանով են տեղական ընտրությունների արդյունքներն ապահովված հետագա քաղաքական միջամտություններից:

Փարաքյար. ընդդիմադիր տեղական իշխանության գործունեության շուրջ շարունակական լարվածություն, համայնքապետի առեղծվածային մահ

2025թ. մարտի 30-ին կայացած Փարաքյար համայնքի ավագանու արտահերթ ընտրություններում հաղթանակ տարավ «Միասնություն» կուսակցությունների դաշինքը՝ ստանալով ընտրողների ձայների շուրջ 57 տոկոսը և գերազանցելով իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակին: Դաշինքի առաջնորդ Վոլոդյա Գրիգորյանը[87] ընտրվեց համայնքի ղեկավար՝ դառնալով ընդդիմադիր ուժերի կողմից ղեկավարվող համայնքների ներկայացուցիչներից մեկը[88]: Ընտրություններին հաջորդած ժամանակահատվածում Փարաքյարը շարունակաբար գտնվել է քաղաքական լարվածության կիզակետում: Մամուլի հրապարակումներում և քաղաքական հայտարարություններում պարբերաբար բարձրաձայնվել են մտահոգություններ այն մասին, որ ընդդիմադիր համայնքային իշխանության գործունեությունը բախվում է տարբեր բնույթի խոչընդոտների, իսկ կենտրոնական իշխանությունների և համայնքային ղեկավարության միջև հարաբերությունները կրում են առճակատման բնույթ[89]: Ընդդիմադիր գործիչներն ու տեղական իշխանության ներկայացուցիչները պնդել են[90], որ առկա է ընտրված մանդատի լիարժեք իրացման նկատմամբ քաղաքական վերահսկողության փորձ, մինչդեռ իշխանության ներկայացուցիչները նման գնահատականները հերքել են՝ դրանք դիտարկելով քաղաքական շահարկումներ: Փարաքար համայնքի ղեկավար Վոլոդյա Գրիգորյանի սպանությունը, որը տեղի ունեցավ ընդդիմադիր ղեկավարի ընտրությունից կարճ ժամանակ անց, լայն արձագանք ստացավ հանրության շրջանում: Թեև պաշտոնական նախաքննությունը դեպքը չի կապել նրա քաղաքական գործունեության հետ, մամուլի մի շարք հրապարակումներ և քաղաքական մեկնաբանություններ հարցադրումներ են բարձրացրել հնարավոր քաղաքական շարժառիթների վերաբերյալ՝ ընդգծելով, որ գործի շուրջ շարունակում են պահպանվել հանրային չփարատված կասկածներ ու անպատասխան մնացած հարցեր[91]:

---

[86] https://hetq.am/hy/article/177589
[87] https://www.facebook.com/watch/?v=1188404992948762
[88] https://www.hetq.am/hy/article/173495
[89] https://www.oragark.com/hayastan-faction-the-people-of-gyumri-and-parakar-rejected-civil-contracts-power-grab/?utm_source=chatgpt.com
[90] https://radar.am/hy/news/social-2689519531/?utm_source=chatgpt.com
[91] https://armlur.am/1508092/?utm_source=chatgpt.com

Փարաքյարի դեպքը, Վանաձորի և Գյումրու օրինակների հետ մեկտեղ, հանրային քննարկման առարկա է դարձել որպես ժողովրդավարական ընտրությունների կարևոր բաղադրիչի՝ ընտրության արդյունքում ձևավորված տեղական իշխանության ինքնուրույնության և ընտրողների կամքի նկատմամբ հարգանքի ապահովման փորձություն: Այս դեպքերը ցույց են տալիս, որ ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանությունը վերաբերում է ոչ միայն քվեարկության օրվան, այլև ընտրությամբ ստացված մանդատի անխոչընդոտ իրացման հնարավորությանը:

(9) Ընդհանուր միջազգային չափանիշներ

Ա. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ[92]

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընտրությունների դիտարկման մեթոդաբանությունը շեշտում է, որ ընտրությունները մեկօրյա գործընթաց չեն[93], այլ ներառում են նախընտրական ամբողջ միջավայրը, այդ թվում՝ հիմնարար իրավունքների պաշտպանությունը, քարոզարշավի ազատ պայմանները, մեդիա բազմակարծությունը և քաղաքացիների նկատմամբ ճնշումների բացակայությունը: ԺՀՄԻԳ-ը նշում է, որ ընտրությունների գնահատման ընթացքում դիտարկվում են ոչ միայն քվեարկության օրվա ընթացակարգերը, այլև «նախընտրական միջավայրում վարչական սահմանափակումները և հիմնարար քաղաքացիական ու քաղաքական իրավունքների նկատմամբ անհարգալից վերաբերմունքը»[94]:

«Դիտորդական առաքելությունները գնահատում են նաև նախընտրական միջավայրը՝ արձանագրելով վարչական սահմանափակումները և հիմնարար քաղաքացիական ու քաղաքական իրավունքների անտեսման դեպքերը»:

Բ. Վենետիկի հանձնաժողովի[95] նորմը

Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը վարչական ռեսուրսների չարաշահումը սահմանում են որպես՝

«Պետական պաշտոնի կամ պետական հաստատությունների հետ կապերի միջոցով որոշ կուսակցությունների կամ թեկնածուների կողմից ընտրությունների արդյունքների վրա ազդելու նպատակով անարդար առավելություն ստանալը»:

«Ընտրությունների անվավեր ճանաչման հիմնական չափանիշն այն է, թե արդյոք արձանագրված խախտումները կարող էին ազդել քվեարկության արդյունքի վրա»:

Վախի մթնոլորտի ստեղծումը, ընտրողներին կամ հասարակական ազդեցություն ունեցող դերակատարներին թիրախավորելը և պետական լծակների ընտրովի կիրառումը

---

[92] https://odihr.osce.org/odihr/elections/methodology

[93] "An election is not a one-day event but a process that commences several months before election day."

[94] "Missions consider the pre-election environment, looking out for violations such as administrative constraints and disregard for fundamental civil and political rights."

[95] Code of Good Practice in Electoral Matters https://docs-venice.coe.int/files/Code%20de%20conduite_GBR%202025_WEB_A5.pdf

հակասում են հավասար հնարավորությունների և ազատ կամարտահայտման սկզբունքներին:

Գ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություններ թիվ 25[96] (ICCPR, General Comment No. 25) 97

«Քվեարկելու իրավունք ունեցող անձինք պետք է ազատ լինեն ընտրելու ցանկացած թեկնածուի … ազատ լինեն սատարելու կամ ընդդիմանալու կառավարությանը՝ առանց որևէ տեսակի անթույլատրելի ազդեցության կամ հարկադրանքի, որը կարող է խեղաթյուրել կամ խոչընդոտել ընտրողի կամքի ազատ արտահայտումը»:

«Ընտրողները պետք է կարողանան իրենց կարծիքը ձևավորել ինքնուրույն՝ զերծ մնալով բռնությունից, բռնության սպառնալիքից, հարկադրանքից, դրդումից կամ ցանկացած տեսակի մանիպուլյատիվ միջամտությունից»:

Դ. ՄԻԵԴ. Քաղաքական գործիչների հատուկ պատասխանատվության սկզբունքը

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ հանրային իշխանություն իրականացնող անձինք կրում են հատուկ պատասխանատվություն իրենց խոսքի հետևանքների համար, քանի որ նրանց հայտարարությունները կարող են ազդել հանրային վերաբերմունքի, հասարակական տրամադրությունների և որոշ խմբերի նկատմամբ անհանդուրժողականության ձևավորման վրա: Հետևաբար, քաղաքական գործիչների կողմից ատելություն, նվաստացում կամ անհանդուրժողականություն խթանող հռետորաբանությունը կարող է հակասել ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներին:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ***Նեպոմնյաչիյը և այլոք ընդդեմ Ռուսաստանի***[98] (Nepomnyashchiy and Others v. Russia, (2023) գործով նշել է.

---

[96] **General Comment No. 25: The right to participate in public affairs, voting rights and the right of equal access to public service (Art. 25) : . 12/07/96. CCPR/C/21/Rev.1/Add.7, General Comment No. 25. (General Comments)** https://www.equalrightstrust.org/ertdocumentbank/general%20comment%2025.pdf

[97] **Persons entitled to vote must be free to vote for any candidate... free to support or oppose government, without undue influence or coercion of any kind which may distort or inhibit the free expression of the elector's will."**

"Voters should be able to form opinions independently, free of violence or threat of violence, compulsion, inducement or manipulative interference of any kind."

ICCPR General Comment No. 25, paras. 19–20

[98] "It is of crucial importance that politicians, including parliamentarians, avoid making statements promoting hatred or intolerance in their public speech."

«Առանցքային նշանակություն ունի, որ քաղաքական գործիչները, ներառյալ խորհրդարանականները, իրենց հանրային խոսքում խուսափեն ատելություն կամ անհանդուրժողականություն խթանող հայտարարություններից»:

«Քաղաքական գործիչները պետք է առանձնահատուկ զգուշավորություն ցուցաբերեն ժողովրդավարական սկզբունքների պաշտպանության հարցում»: (§ 75)

Մեկ այլ՝ ***Բեհարը և Գութմանն ընդդեմ Բելգիայի*** (Behar and Gutman v. Bulgaria, ECtHR, (2021)[99] գործով՝ ՄԻԵԴ-ը հաստատել է, որ նույնիսկ պատգամավորների խոսքը պաշտպանված չէ, եթե այն հակասում է Կոնվենցիայի ժողովրդավարական արժեքներին.

> « …Խոսքի ազատության իրականացումը, նույնիսկ խորհրդարանի անդամների կողմից, ենթադրում է պարտականություններ և պատասխանատվություն»:

Ե.ՄԻԵԴ. Քաղաքական ռեպրեսիա՝ քրեական հետապնդման ժամանակային համընկնումը

ՄԻԵԴ-ն ունի մի ամբողջ իրավական դոկտրինա՝ Հոդված 18, որով արգելվում է սահմանափակումների կիրառումը ոչ այն նպատակով, որի համար դրանք նախատեսված են: Այսինքն՝ երբ օրինական գործիքը օգտագործվում է թաքնված քաղաքական նպատակով:

Սելահաթին Դեմիրթաշն ընդդեմ Թուրքիայի գործով[100] (Selahattin Demirtaş v. Turkey, GC, (2020) ՄԻԵԴ-ը գտավ, որ քրեական հետապնդումը և կալանքը իրավաչափ միջամտություն չեն, քանի որ՝

> «հետապնդում էին բազմակարծությունը ճնշելու և քաղաքական բանավեճի ազատությունը սահմանափակելու թաքնված նպատակ»:

"Politicians must take particular care to defend democratic principles, as their ultimate goal is to take power." *Nepomnyashchiy and Others v. Russia*, Applications nos. 39954/09 and 3465/17, Judgment of 30 May 2023, § 75., ECtHR, 2023, HUDOC: UDOC: https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-224959%22]}

[99] "...the exercise of freedom of expression, even by members of parliament, carries with it duties and responsibilities.", Behar and Gutman v. Bulgaria, ECtHR, 2021

[100] "The Court concludes that the applicant's prolonged pre-trial detention pursued the ulterior purpose of stifling pluralism and limiting freedom of political debate, which is at the very core of the concept of a democratic society."

European Court of Human Rights (Grand Chamber), *Selahattin Demirtaş v. Turkey (No. 2)*, Application no. 14305/17, Judgment of 22 December 2020, §§ 435–442.

HUDOC: https://hudoc.echr.coe.int/eng?i=001-207173

Դատարանը հատուկ ուշադրություն դարձրեց հետևյալի վրա՝

- ընդդիմադիր առաջնորդ լինելու հանգամանքին,
- հետապնդման ժամանակին,
- քաղաքական իրադարձությունների հետ համընկնմանը:

Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուի նախնական կալանքը հետապնդել է ունեցել է քաղաքական բազմակարծությունը ճնշելու և ժողովրդավարական բանավեճը սահմանափակելու թաքնված նպատակ՝ արձանագրելով Կոնվենցիայի 18-րդ հոդվածի խախտում՝ 5-րդ հոդվածի համադրությամբ:

Մեկ այլ՝ ***Նավալնին ընդդեմ Ռուսաստանի***[101] գործով (Navalnyy v. Russia (2018)) ՄԻԵԴ-ը նշել է, որ՝

> «Սահմանափակումները կիրառվել էին Կոնվենցիայով նախատեսված նպատակներից տարբերվող նպատակներով»:

Դատարանը նաև եզրակացրել է, որ դրանց թաքնված նպատակը քաղաքական բազմակարծության ճնշումն էր, որը հանդիսանում է իրավունքի գերակայության վրա հիմնված արդյունավետ ժողովրդավարության բաղկացուցիչ մասը: Սույն գործով դատարանը հատուկ կարևորել է՝

- ընդդիմադիր ակտիվության աճը,
- հանրային ազդեցությունը,
- քաղաքական կարևոր փուլերում հետապնդումների ակտիվացումը:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ նույնիսկ այն դեպքերում, երբ քրեական հետապնդումը ձևականորեն հիմնվում է օրենքով նախատեսված մեղադրանքների վրա, այն կարող է գնահատվել որպես քաղաքական դրդապատճառներով պայմանավորված սահմանափակում, եթե գործի հանգամանքները, ժամանակային համընկնումը, կիրառված միջոցների անհամաչափությունը և քաղաքական գործունեության վրա դրանց ազդեցությունը վկայում են, որ իրական նպատակը եղել է բազմակարծության ճնշումը և քաղաքական մրցակցության սահմանափակումը: Այդպիսի իրավիճակներում դատարանը կարող է արձանագրել Մարդու իրավունքների եվրոպական

---

[101] “The Court finds that the restrictions on the applicant's rights were imposed for an ulterior purpose, namely to suppress political pluralism, which forms part of effective political democracy governed by the rule of law.” (§ 174)

European Court of Human Rights (Grand Chamber), *Navalnyy v. Russia*, nos. 29580/12 and 4 others, Judgment of 15 November 2018, §§ 166, 174.

HUDOC՝ https://hudoc.echr.coe.int/eng?i=001-187605

կոնվենցիայի 18-րդ հոդվածի խախտում՝ սահմանելով, որ իրավական մեխանիզմները կիրառվել են ոչ թե իրենց օրինական նպատակներով, այլ քաղաքական այլախոհությունը սահմանափակելու նպատակով:

Նույնիսկ եթե իշխանությունների կողմից ներկայացված մեղադրանքները ձևականորեն տեղավորվում են քրեական իրավունքի շրջանակներում, դրանց կիրառման ժամանակը, ընտրովի բնույթը, անհամաչափությունը և քաղաքական գործընթացների վրա ունեցած ազդեցությունը կարող են վկայել, որ դրանք ծառայել են ոչ թե արդարադատության իրականացման, այլ քաղաքական բազմակարծության սահմանափակման նպատակին:

(ա) Համեմատություն՝ Լեհաստան[102] (2023)
Նման մտահոգություններ նախկինում արձանագրվել են նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից այլ երկրներում, մասնավորապես Լեհաստանի 2023թ. ընտրությունների ընթացքում, երբ դիտորդները քննադատել էին պառակտող հռետորաբանությունը[103] և իշխանության կողմից պետական առավելությունների օգտագործումը.

«Քարոզարշավը բնութագրվում էր անհանդուրժողական և պառակտող հռետորաբանությամբ», իսկ իշխանությունները «անհարկի առավելություն էին ստանում պետական ռեսուրսների և հանրային մեդիայի նկատմամբ ազդեցության շնորհիվ»:

(բ) Համեմատություն՝ Վրաստան[104] (2024)
ԺՀՄԻԳ-ը Վրաստանի ընտրությունների վերաբերյալ արձանագրել էր[105].

> *«Ընտրողների նկատմամբ ահաբեկման և ճնշումների մասին հաղորդումները բացասաբար են ազդել ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վրա»:*
>
> *«Պետական ինստիտուտների անաչառության վերաբերյալ հարցադրումները խաթարում են ընտրությունների արդյունքների նկատմամբ վստահությունը»:*
>
> *«Քարոզարշավի հռետորաբանությունն ու պատկերային ուղերձները խիստ բևեռացնող էին»:*[106]

---

[102] https://cdn.osce.org/sites/default/files/f/documents/9/9/548257_0.pdf
[103] "Political parties met with by the ODIHR NAM were confident in the freedom to campaign although several interlocutors noted concern with the prevalence of inflammatory speech in the current political environment", p. 2, https://cdn.osce.org/sites/default/files/f/documents/9/9/548257_0.pdf .
[104] "Reports of intimidation and pressure on voters negatively impacted public trust in the process." , "Questions about the impartiality of state institutions ... undermines trust in the outcome.", "Campaign rhetoric and imagery were highly divisive.", https://odihr.osce.org/sites/default/files/f/documents/1/6/584029_0.pdf
[105] https://odihr.osce.org/odihr/elections/georgia/579376
[106] "Reports of pressure on voters, particularly on public sector employees, remained widespread in the campaign. This, coupled with extensive tracking of voters on election day, raised concerns about the ability of some voters to cast their vote without fear of retribution."

(գ) Համեմատություն՝ Ռումինիա[107] (2024)

2024թ. դեկտեմբերի 6-ին Ռումինիայի Սահմանադրական դատարանը **չեղարկեց նախագահական ընտրությունների ամբողջ առաջին փուլը:** Պատճառներն էին՝ արտաքին միջամտության առկայությունը, համակարգված մանիպուլյացիան, քարոզարշավի թափանցիկության խախտումները, ընտրական հավասարության խաթարումը:

(դ) Համեմատություն՝ Ավստրիա[108] (2016)

Սահմանադրական դատարանը չեղարկեց նախագահական ընտրությունների երկրորդ փուլը: Թեև չապացուցվեց կեղծիք, դատարանը գտավ, որ ընթացակարգային խախտումները **կարող էին ազդել արդյունքների վրա**: Այս նախադեպը հատկապես հետաքրքիր է, քանի որ կրկին կիրառվեց «**may have affected the outcome»** չափանիշը, քանի որ ժողովրդավարական երկրում՝ դրա հիմքում ընկած ամենահիմնարար սկզբունքը՝ ժողովրդի իր իշխանություններին ընտրելու իրավունքի ազատ կամարտահայտումը հարցականի տակ էր դրվել:

(10) Բռնաճնշումները՝ ներպետական օրենսդրության ներքո

Ա. ՀՀ Սահմանադրություն (Հոդված 48. Ընտրական իրավունքի սկզբունքները)

Ընտրությունները պետք է լինեն՝

> **համընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:**

Այսինքն՝ «ազատ ընտրություն» հասկացությունը վերաբերում է ոչ միայն քվեարկության օրվան, այլև ամբողջ նախընտրական միջավայրին:

Բ. Ազատ կամարտահայտման սկզբունքը

ՀՀ Ընտրական օրենսգրքի հիմնարար դրույթներից մեկը (**Հոդված 4. Ազատ ընտրական իրավունքը**) սահմանում է.

> «Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա»:

> «Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին»:

[107] https://www.journalofdemocracy.org/online-exclusive/why-romania-just-canceled-its-presidential-election/
[108] https://www.dw.com/en/top-austrian-court-annuls-presidential-election-result/a-19371074

«Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել»:

Սա, ըստ էության, նշանակում է, որ արգելվում է ոչ միայն ֆիզիկական հարկադրանքը, այլև այնպիսի մթնոլորտի ստեղծումը, որը կարող է ազդել ընտրողի ազատ որոշման վրա:

Վերը ներկայացված դեպքերը մտահոգիչ են նաև ներպետական իրավունքի տեսանկյունից: ՀՀ Ընտրական օրենսգիրքը հստակ սահմանում է, որ ոչ ոք իրավունք չունի հարկադրելու ընտրողին քվեարկել կամ չքվեարկել որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ, ինչպես նաև որևէ կերպ ստիպելու նրան բացահայտել իր կամարտահայտությունը: Ընտրությունները պետք է իրականացվեն ազատ ընտրական իրավունքի հիման վրա, ինչը ենթադրում է այնպիսի նախընտրական միջավայր, որտեղ քաղաքացիները կարող են արտահայտել իրենց քաղաքական հայացքները, մասնակցել հանրային քննարկումներին և կայացնել ընտրական որոշումներ՝ առանց վախի, ճնշման, հաշվեհարդարի կամ պիտակավորման վտանգի: Ընտրությանը մասնակցող ուժերի վերաբերյալ զրպարտչական տեղեկատվության, անմեղության կանխավարկածը խախտող, դատարանով չհաստատված մեղադրանքների ֆոնին, ռեպրեսիվ միջավայրում անցկացված ընտրությունների արդյունքները հարցականի տակ են դնում այդպիսի ընտրություններով ընտրված իշխանության լեգիտիմությունը և միտված են խաթարելու առանց այն էլ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում գտնվող երկրի անդորրը, չեն ներշնչում վստահություն այդպիսի իշխանությունների նկատմամբ:

Գործող իշխանության ղեկավար Նիկոլ Փաշինյանը[109] հունիսի 11-ի իր խոսքում, անդրադառնալով ամսի 7-ին տեղի ունեցած ընտրություններին ծաղրել, պիտակավորել է ՀՀ այն ընտրողներին, ովքեր չեն ընտրել իր ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ անհիմն կոչելով հարյուրհազարավոր անձանց «կաշառվածներ» և խորացնելով համընդհանուր բևեռացման մթնոլորտը: Նա սպառնացել է «ընտրակաշառքի մեջ թաթախված անձանց» ձերբակալել մինչև հաջորդ ընտրությունների ավարտը, և նկատել, որ ընտրված ընդդիմադիրների կողմից մանդատներ վերցնելը կնշանակի «փողի որ տրցակների ներկայություն» խորհրդարանում, որոնցից «ոչ մի օգուտ չկա»: Առողջ քաղաքական բանավեճի հետ եզրեր չունեցող, մարդկային բարեկրթության սահմաններից դուրս, անընդունելի այս խոսույթը միայն մեկ օրինակն է իշխանության տարբեր ներկայացուցիչների կողմից տարբեր հարթակներից հնչեցրած զրպարտչական, վիրավորական խոսքի՝ ուղղված ընդդիմության ու հանրությանը:

Հաշվի առնելով ողջ նախընտրական փուլում և նույնիսկ դրանից հետո տիրող այսպիսի մթնոլորտը, որի ժամանակ իշխանություններին քննադատող քաղաքացիների նկատմամբ անհամաչափ արձագանքները, սպառնալիքները, հանրային նվաստացումները կամ իրավական մեխանիզմների ընտրովի կիրառումը դարձել է գործող իշխանությունների բնականոն գործելաոճը, դրանք կարող են դիտարկվել ոչ միայն որպես միջազգային չափանիշների, այլև ՀՀ ընտրական օրենսդրության ոգու և նպատակների հետ անհամատեղելի երևույթներ, և դրանց վերաբերյալ բարձրացված մտահոգությունները տեղին են և կարող են ամուր հիմք հանդիսանալ հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների չեղարկման համար:

[109] https://www.youtube.com/shorts/2zMKsWYNMm8

Եզրակացություն

Վերոնշյալ դեպքերը, դիտարկվելով իրենց ամբողջության մեջ, կարող են վկայել ոչ թե առանձին միջադեպերի, այլ նախընտրական շրջանում ձևավորված համակարգային միջավայրի մասին, որտեղ քաղաքական մրցակիցների, հանրային ազդեցություն ունեցող ինստիտուտների, լրագրողների և շարքային քաղաքացիների նկատմամբ ճնշումները, թշնամական հռետորաբանությունը և իրավական մեխանիզմների ընտրովի կիրառման վերաբերյալ մտահոգությունները կարող էին ազդել ընտրողների ազատ կամարտահայտման և ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության վրա:

Ժողովրդավարական ընտրությունները պահանջում են ոչ միայն տեխնիկապես պատշաճ կազմակերպված քվեարկություն, այլև այնպիսի նախընտրական միջավայր, որտեղ քաղաքացիները կարող են արտահայտվել և մասնակցել քաղաքական կյանքին՝ առանց վախի, պատժի կամ պիտակավորման վտանգի:

Եվրոպական ժողովրդավարական չափանիշների համաձայն՝ հանրային վստահություն ինստիտուտների և քաղաքական գործիչների անձանց նկատմամբ իշխանությունների կողմից իրականացվող համակարգված հեղինակազրկման արշավները կարող են ազդել ընտրական գործընթացի բազմակարծության վրա, եթե դրանց հետևանքով սահմանափակվում է այդ դերակատարների մասնակցությունը հանրային քննարկումներին կամ հասարակությանն այլընտրանքային տեսակետներ ներկայացնելու հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ հաստատում ենք, որ իշխանությունների կողմից գեներացված ընդարձակ վախի ու ահաբեկման մթնոլորտը, անորոշ ու անհիմն պատճառերով, ակնհայտ շինծու գործերով մեծաքանակ ձերբակալությունները նշանակալիորեն ազդել են քաղաքացիների ազատ կամքի արտահայտման վրա, ուստի դրանք հանդիսանում են ընտրությունների միջոցով ազատ կամարտահայտման մարդու հիմնարար իրավունքի մասսայական կոպիտ խախտումներ և կասկածի տակ են դնում 2026թ. հունիսի 7-ին անցկացրած ՀՀ համապետական ընտրությունների արդյունքների արժանահավատությունն ու ինքնին ընտրությունների օրինականությունը: